



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ 13(327) 17.07.2017թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ		
130	«Պետական կենսաթոշակների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-8-Ն օրենքը.....	3
131	«Ձորահավաքային նախապատրաստության և գորահավաքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԱՀ ՀՕ-9-Ն օրենքը.....	
132	«Արցախի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ԱՀ ՀՕ-10-Ն օրենքը.....	6
ՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ		
133	«Արցախի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակարգը հաստատելու մասին» ԱՀ Ազգային ժողովի Ն-159-6 որոշումը.....	15
ՅՈՒԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
134	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 26-ի N 29-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 429-Ն որոշումը.....	32
135	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և լրացում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի N 865-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 459-Ն որոշումը.....	38
136	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի նոյեմբերի 24-ի N 743-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 473-Ն որոշումը	41
137	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 475-Ն որոշումը.....	42

138	«Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների համար «Դ» սերիայի դրոշմապիտակները կիրառության մեջ դնելու մասին» ԼՂՀ կառավարության N 481-Ն որոշումը.....	43
139	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 489-Ն որոշումը.....	44
140	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 490-Ն որոշումը.....	45
141	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 491-Ն որոշումը.....	46
142	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 30-ի N 966-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 496-Ն որոշումը.....	47
143	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի N 865-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 513-Ն որոշումը.....	54
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
144	ԼՂՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ N 2457/02/16թ. որոշումը.....	56
145	ԼՂՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ 2039/02/16թ. որոշումը.....	66
146	ԼՂՀ Գերագույն դատարանի վարչական գործ ԸԻԴ 0097/05/16թ. որոշումը.....	76
147	ԼՂՀ Գերագույն դատարանի քրեական նյութ ԸԻԴ 0001/11/17 որոշումը.....	84

**«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Պետական կենսաթոշակների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2011 թվականի նոյեմբերի 30-ի ՀՕ-60-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 29-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) սույն օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 3-րդ կետի «դ», «զ» ենթակետերով սահմանված կարգով հաշվարկված ժամանակահատվածները.».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մաս.

«6. Սույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով սահմանված զինվորական ծառայության ժամանակահատվածները աշխատանքային ստաժում հաշվառվում են անկախ պարտադիր կենսաթոշակային սոցիալական ապահովագրության ենթակա լինելու և սոցիալական վճար կատարելու հանգամանքից:»:

Հոդված 2. Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասում «հաստատող փաստաթուղթը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերի» բառերը:

Հոդված 3. Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությունում «նշանակելու» բառից հետո լրացնել «, առաջին խմբի հաշմանդամին և հոգեբուժական հաստատությունում բուժվող անձին կենսաթոշակ նշանակելու» բառերը, իսկ 3-րդ մասի 2-րդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասում «նախորդ տարվա ընթացքում» բառերը փոխարինել «վերջին անգամ» բառերով:

Հոդված 5. Օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին նախադասությունում «գումարը» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ դիմելու ամսվա կենսաթոշակի գումարը)» բառերը:

Հոդված 6. Օրենքի 38-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. Կենսաթոշակի չափը վերահաշվարկվում է նաև, եթե կենսաթոշակի գործում հայտնաբերվել է կեղծ (ոչ հավաստի) փաստաթուղթ, որի արդյունքում նվազում է կենսաթոշակի չափը, կամ կենսաթոշակի գործում հայտնաբերվել է լրացուցիչ փաստաթուղթ (տեղեկատվություն), որի արդյունքում ավելանում է կենսաթոշակի չափը: Այս դեպքերում սխալմամբ (Լեոնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի խախտմամբ) ավել վճարված կենսաթոշակի գումարները հաշվարկվում են այն օրվանից, երբվանից կեղծ (ոչ հավաստի) փաստաթղթի հիման վրա հաշվարկվել (վերահաշվարկվել) է կենսաթոշակի չափը, իսկ պակաս վճարված կենսաթոշակի գումարը հաշվարկվում է այն օրվանից, երբվանից լրացուցիչ փաստաթուղթը (տեղեկատվությունը) ներկայացվել է կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում (ներառվել է կենսաթոշակի գործում)՝ հաշվի առնելով սույն օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը:»:

Հոդված 7. Օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասում «անձին» բառից հետո լրացնել «, ինչպես նաև կալանավորված անձին» բառերը:

Հոդված 8. Օրենքի 41-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 2-րդ պարբերությունում «2-րդ» բառից հետո լրացնել «, 2.1-ին» բառը.

2) 4-րդ մասի 3-րդ կետում «ընթացքում» բառից հետո լրացնել «կամ սույն մասի 1-ին կետով սահմանված կարգով դիմելու (անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկատվությունն ստացվելու) ամսին հաջորդող ամսվա 1-ից» բառերը.

3) 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով.

«Ուսումնական հաստատությունում սովորող անձի՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելու և կենսաթոշակ վճարելը վերսկսելու

ատանձնահատկությունները սահմանում է Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 9. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 43.1-ին հոդվածով.

«Հոդված 43.1. Կենսաթոշակատուին սխալմամբ (Լեոնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի խախտմամբ) վճարված կենսաթոշակի գումարների չափը հաշվարկելը

1. Կենսաթոշակ ստանալու իրավունքը սույն օրենքով սահմանված կարգով չդադարեցնելու հետևանքով սխալմամբ (Լեոնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի խախտմամբ) ավել վճարված կենսաթոշակի գումարների չափը հաշվարկելիս, եթե կենսաթոշակատուն նույն ժամանակահատվածում ունի պետական բյուջեից ֆինանսավորվող այլ կենսաթոշակի իրավունք, ապա համարվում է, որ կենսաթոշակատուն ներկայացրել է այլ կենսաթոշակ նշանակելու դիմում այն օրը (բայց ոչ շուտ, քան այլ կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու օրը), երբվանից կենսաթոշակ ստանալու իրավունքը պետք է դադարեցվեր: Այս դեպքում կենսաթոշակ նշանակելու դիմում ներկայացնելու օրվանից մինչև կենսաթոշակ ստանալու իրավունքը փաստացի դադարեցնելու օրն ընկած ժամանակահատվածի համար հաշվարկված այլ կենսաթոշակի գումարը համարվում է կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման մեղքով չվճարված կենսաթոշակի գումար և հաշվանցվում է ավել վճարված կենսաթոշակի գումարներից:»:

Հոդված 10. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2017թ. հուլիսի 5
Ստեփանակերտ
ՀՕ-8

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
հունիսի 28-ին

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է Արցախի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի (այսուհետ՝ պատգամավոր) գործունեության իրականացման իրավական, սոցիալական և այլ երաշխիքները, ինչպես նաև պատգամավորի գործունեության երաշխիքներին առնչվող այլ հարաբերություններ:

2. Պատգամավորի գործունեության երաշխիքները սահմանվում են Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, «Ազգային ժողովի կանոնակարգ» Արցախի Հանրապետության օրենքով, սույն օրենքով և այլ օրենքներով:

Հոդված 2. Պատգամավորական մանդատի անհամատեղելիությունը

1. Սահմանադրության 111-րդ հոդվածին համապատասխան՝ պատգամավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

2. Պատգամավորական մանդատն ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, պատգամավորը պարտավոր է՝

1) դուրս գալ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումից:

2) ազատվել առևտրային կազմակերպություններում զբաղեցրած պաշտոնից.

3) դուրս գալ առևտրային կազմակերպություններից կամ դրանց կանոնադրական կապիտալում իր բաժնեմասն ամբողջությամբ հանձնել հավատարմագրային կառավարման.

4) հրաժարվել առևտրային կազմակերպությունում ուրիշի գույքի հավատարմագրային կառավարումից.

5) ազատվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում զբաղեցրած պաշտոններից, բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասում նշված պաշտոնների.

6) ազատվել վճարովի հիմունքներով աշխատանքից, բացառությամբ գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանքի:

3. Եթե առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում պատգամավորի մասնաբաժնի հավատարմագրային կառավարման պայմանագիրը չի դադարել այդ կազմակերպության լուծարման կամ սնանկ ճանաչվելու հիմքով, ապա պատգամավորը պարտավոր է հավատարմագրային կառավարման պայմանագիրը դադարելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, դուրս գալ առևտրային կազմակերպությունից կամ դրա կանոնադրական կապիտալում իր բաժնեմասն ամբողջությամբ հանձնել հավատարմագրային կառավարման:

4. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետի ընթացքը կասեցվում է Գերագույն դատարանում՝ Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների վիճարկման մասին գործի քննության ընդունման օրվանից մինչև այդ գործով Գերագույն դատարանի վերջնական որոշման ընդունման օրը:

5. Պատգամավորի կարգավիճակով պայմանավորված պաշտոններ են Ազգային ժողովի նախագահի և նրա տեղակալի, հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների, խմբակցությունների ղեկավարների և քարտուղարների պաշտոնները, ինչպես նաև Ազգային ժողովի կամ նրա մարմինների լիազորությունների կամ գործառույթների իրականացմանն առնչվող այլ պաշտոններ:

6. Սույն օրենքի իմաստով ձեռնարկատիրական գործունեություն, ինչպես նաև գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանք է համարվում «Հանրային ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության

օրենքի 24-րդ հոդվածով սահմանված համապատասխան գործունեությունը կամ աշխատանքը:

7. Պատգամավորին գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանքի համար վճարումը չի կարող գերազանցել ողջամիտ չափը, այսինքն՝ այն չափը, որին նույնպիսի գործունեության համար համանման որակներ ունեցող, բայց պատգամավոր չհամարվող անձը կարող է հավակնել:

8. Պատգամավորական լիազորությունների իրականացման հետ կապված՝ պատգամավորի պարտականությունները գերակա են նրա կողմից իրականացվող գիտական, կրթական, ստեղծագործական աշխատանքի կամ օրենքով չարգելված այլ աշխատանքային գործունեության նկատմամբ:

9. Ազգային ժողովի բնականոն աշխատանքն ապահովելու համար պատգամավորն Ազգային ժողովի նախագահին և իր անդամակցած հանձնաժողովի նախագահին տեղյակ է պահում համատեղությամբ կատարվող գիտական, կրթական, ստեղծագործական աշխատանքի մասին:

Հոդված 3. Պատգամավորական էթիկայի կանոնները

1. Սույն հոդվածի պահանջները վերաբերում են ինչպես պատգամավորի լիազորությունների իրականացմանը, այնպես էլ՝ նրա ամենօրյա վարքագծին:

2. Պատգամավորական էթիկայի կանոններն են՝

1) հարգել օրենքը և ենթարկվել օրենքին.

2) հարգել հանրության բարոյական նորմերը.

3) պահպանել Ազգային ժողովի, նրա հանձնաժողովների նիստերի և խորհրդարանական լսումների անցկացման կարգը.

4) իր լիազորություններն իրականացնելիս չառաջնորդվել իր կամ իր հետ փոխկապակցված անձանց անձնական շահերով.

5) չօգտագործել պատգամավորի պաշտոնի հեղինակությունն ի շահ իրեն կամ այլ անձի.

6) իր գործունեությամբ նպաստել Ազգային ժողովի նկատմամբ վստահության և հարգանքի ձևավորմանը.

7) ամենուր և ցանկացած գործունեությամբ զբաղվելիս դրսևորել պատգամավորին վայել վարքագիծ.

8) հարգալից վերաբերմունք ցուցաբերել քաղաքական ընդդիմախոսների, Ազգային ժողովում հարցերի քննարկման մասնակիցների, լրագրողների, ինչպես նաև բոլոր այն անձանց

նկատմամբ, որոնց հետ պատգամավորը շփվում է իր լիազորություններն իրականացնելիս:

Հոդված 4. Պատգամավորի շահերի բախումը

1. Պատգամավորի կողմից իր կամ իրեն փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվելը նշանակում է օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալը, Ազգային ժողովի որոշման, հայտարարության կամ ուղերձի նախագիծ ներկայացնելը, Ազգային ժողովում շրջանառության մեջ դրված հարցի վերաբերյալ առաջարկ ներկայացնելը, ինչպես նաև Ազգային ժողովի կամ նրա հանձնաժողովի նիստում ելույթ ունենալը, հարցեր տալը կամ քվեարկությանը մասնակցելը, որը թեև ինքնին օրինական է, սակայն պատգամավորը տեղյակ է կամ պարտավոր էր տեղյակ լինել, որ այն հանգեցնում կամ նպաստում է կամ ողջամտորեն կարող է հանգեցնել կամ նպաստել նաև՝

1) իր կամ իր հետ փոխկապակցված անձի գույքային կամ իրավական դրության բարելավմանը.

2) իր կամ իր հետ փոխկապակցված անձի անդամակցած ոչ առևտրային կազմակերպության գույքային կամ իրավական դրության բարելավմանը.

3) իր կամ իր հետ փոխկապակցված անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպության գույքային կամ իրավական դրության բարելավմանը.

4) իր հետ փոխկապակցված անձին պաշտոնում նշանակմանը.

5) պաշտոնում իր ընտրությանը կամ նշանակմանը, բացառությամբ սույն օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասում նշված պաշտոնների, ինչպես նաև որպես Ազգային ժողովի կողմից ընտրվող պաշտոնում թեկնածու՝ իր ելույթի:

2. Սույն օրենքի իմաստով պատգամավորի հետ փոխկապակցված անձինք են համարվում «Հանրային ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի համաձայն բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձինք:

3. Շահերի բախում առաջանալու դեպքում պատգամավորը պարտավոր է Ազգային ժողովի կամ իր անդամակցած

հանձնաժողովի նիստում ելույթից կամ քվեարկությունից առաջ հանդես գալ շահերի բախման վերաբերյալ հայտարարությամբ, իսկ օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալիս, Ազգային ժողովի որոշման, հայտարարության, ուղերձի նախագիծ ներկայացնելիս, Ազգային ժողովում շրջանառության մեջ դրված հարցի վերաբերյալ առաջարկ ներկայացնելիս համապատասխան փաստաթղթերի հետ ներկայացնել շահերի բախման վերաբերյալ իր գրավոր հայտարարությունը՝ նկարագրելով շահերի բնույթը:

4. Եթե պատգամավորն Ազգային ժողովի կամ իր անդամակցած հանձնաժողովի նիստում հանդես է գալիս շահերի բախման վերաբերյալ հայտարարությամբ, ապա հարցի քվեարկությունից նրա բացակայությունը համարվում է հարգելի:

5. Մույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթները մեկնաբանելիս համարվում է, որ պատգամավորը չի առաջնորդվում իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով, եթե նա հանդես է գալիս Ազգային ժողովի հանձնաժողովի կամ խմբակցության անունից, կամ տվյալ գործողությունը՝

1) վերաբերում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, հիմնարկների կամ դրանց պաշտոնատար անձանց գործունեությանը.

2) ունի համընդհանուր կիրառելիություն և անդրադառնում է հասարակության լայն շերտերի վրա այնպես, որ ողջամտորեն չի կարող մեկնաբանվել որպես պատգամավորի կամ նրա հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել.

3) վերաբերում է պատգամավորի վարձատրության չափին, գործունեության հետ կապված ծախսերի փոխհատուցմանը, արտոնություններին կամ գործունեության այլ երաշխիքներին:

Հոդված 5. Պատգամավորի աշխատանքային գործունեությունը

1. Պատգամավորի աշխատավայրն Ազգային ժողովի նստավայրն է:

2. Պատգամավորի հիմնական աշխատանքային ժամանակը ներառում է Ազգային ժողովի, նրա խմբակցությունների, հանձնաժողովների, աշխատանքային խմբերի նիստերի և

խորհրդարանական լսումների անցկացման, ինչպես նաև պատգամավորի այլ լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ժամանակահատվածը: Պատգամավորի հիմնական աշխատանքային ժամանակը նորմավորված չէ:

3. Պատգամավորի վարձատրության չափը սահմանվում է օրենքով:

4. Ազգային ժողովի նիստերից, ինչպես նաև հանձնաժողովի նիստերից կամ նրա հրավիրած խորհրդարանական լսումներից անհարգելի բացակայած օրերի համար պատգամավորին աշխատավարձ չի վճարվում: Պատգամավորների բացակայությունները հաշվառում է Ազգային ժողովի աշխատակազմը:

5. Ազգային ժողովի նախագահի կարգադրությամբ ծառայողական գործուղման մեկնող պատգամավորին գործուղման ծախսերի հատուցումը տրվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Պատգամավորի լիազորությունների ժամանակաշրջանը հաշվարկվում է որպես հանրային ծառայության ստաժ: Պատգամավորի աշխատանքային ստաժը չի ընդմիջվում, եթե նա իր լիազորությունների ավարտից հետո՝ երեք ամսվա ընթացքում, անցնում է այլ աշխատանքի:

7. Պատգամավորին իր լիազորությունների ժամկետով տրվում են պատգամավորական վկայական և «Ազգային ժողովի պատգամավոր» կրծքանշան:

Հոդված 6. Պատգամավորի հարցումները և ընդունելության իրավունքը

1. Պատգամավորն իրավունք ունի հարցումներով և առաջարկներով դիմելու պետական կառավարման համակարգի մարմիններին, տեղական ինքնակառավարման մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց:

2. Իրավասու պաշտոնատար անձինք պարտավոր են՝

1) երկշաբաթյա ժամկետում քննարկել պատգամավորի գրավոր հարցումը կամ առաջարկը և գրավոր պատասխանել նրան.

2) պատգամավորի բարձրացրած հարցի քննարկումը կազմակերպելու դեպքում հնարավորինս սեղմ ժամկետում տեղեկացնել նրան:

3. Պատգամավորը հնարավորինս սեղմ ժամկետում ընդունելության իրավունք ունի Կառավարության անդամների, ինչպես նաև Կառավարությանը և նախարարություններին ենթակա պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարների, Արցախի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինների, համայնքների ղեկավարների կամ իր գրավոր հարցմանը, առաջարկին պատասխանելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձանց մոտ:

4. Պատգամավորն օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է ներկա լինել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների նիստերին:

Հոդված 7. Պատգամավորի ընդունելության կազմակերպումը քաղաքացիների հետ

1. Տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են պատգամավորի պահանջով ամսական առնվազն մեկ օր կահավորված սենյակ կամ դահլիճ հատկացնել նրան՝ քաղաքացիների ընդունելության կազմակերպման համար:

Հոդված 8. Պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում ստանալու իրավունքը

1. Պատգամավորն իր լիազորությունների ժամկետում ունի տարկետում ստանալու իրավունք և ազատվում է զորահավաքներից ու վարժական հավաքներից:

Հոդված 9. Պատգամավորի բնակարանային պայմանների ապահովումը

1. Ստեփանակերտ քաղաքում բնակարան չունեցող պատգամավորին տրվում է Ստեփանակերտ քաղաքում բնակարանի վարձին համարժեք փոխհատուցում:

Հոդված 10. Պատգամավորի արձակուրդը

1. Պատգամավորն ունի ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք՝ 30 աշխատանքային օր տևողությամբ: Հիմնական արձակուրդային վճարից բացի, պատգամավորին վճարվում է

լրացուցիչ միանվագ արձակուրդային վճար՝ իր միջին ամսական աշխատավարձի չափով:

2. Պատգամավորն ունի աշխատանքային օրենսդրությամբ սահմանված չվճարվող արձակուրդի իրավունք:

3. Պատգամավորների ամենամյա հերթական արձակուրդը տրամադրվում է ամռանը՝ հերթական նստաշրջանի ավարտից հետո:

Հոդված 11. Պատգամավորի գործունեության ապահովումը

1. Ազգային ժողովի նստավայրում պատգամավորին հատկացվում է կահավորված, տեխնիկական և կապի (այդ թվում՝ համակարգիչ, ինտերնետային կապ) միջոցներով հագեցված աշխատասենյակ, իսկ Ազգային ժողովի նիստերի դահլիճում՝ խոսափողով և անվանական էլեկտրոնային քվեարկության սարքավորումով հագեցված աշխատատեղ:

2. Պատգամավորի գործունեության մասնագիտական սպասարկումն ապահովում են նրա օգնականները և Ազգային ժողովի աշխատակազմը:

3. Օգնականը պատգամավորի հանձնարարությամբ՝

1) նախապատրաստում է պատգամավորի կողմից Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվող փաստաթղթերը.

2) նախապատրաստում է պատգամավորի լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ վերլուծական, տեղեկատվական և այլ նյութեր.

3) կազմակերպում է պատգամավորի մոտ քաղաքացիների ընդունելությունը.

4) կարող է «Ազգային ժողովի կանոնակարգ» Արցախի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ներկա լինել Ազգային ժողովի հանձնաժողովների հրապարակային նիստերին և խորհրդարանական լուսմներին.

5) վարում է պատգամավորին ուղղված փաստաթղթերի գործավարությունը:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված գործառույթներն իրականացնելիս պատգամավորի օգնականներն օգտվում են պատգամավորի աշխատասենյակից, տեխնիկական և կապի միջոցներից:

Հոդված 12. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Սահմանադրության 168-րդ հոդվածին համապատասխան ընտրված Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2017թ. հուլիսի 5
Ստեփանակերտ
ՀՕ-10-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով 2006 թվականի դեկտեմբերի 10-ի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության 76-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Արցախի Հանրապետության Ազգային ժողովը որոշում է.

1. Սահմանել Արցախի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արցախի Հանրապետության Սահմանադրության 168-րդ հոդվածին համապատասխան ընտրված Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

**Արցախի Հանրապետության
Ազգային ժողովի նախագահ՝**

Ա. ՂՈՒԼՅԱՆ

28 հունիսի 2017թ.
ք. Ստեփանակերտ
Ն-159-6

Հավելված
«Արցախի Հանրապետության Ազգային ժողովի
աշխատակարգը հաստատելու մասին» Արցախի
Հանրապետության Ազգային ժողովի որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով սահմանվում են (այսուհետ՝ Աշխատակարգ) «Ազգային ժողովի կանոնակարգ» Արցախի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Կանոնակարգ) նախատեսված դեպքերում Ազգային ժողովի և նրա մարմինների լիազորությունների և գործառնությունների իրականացման ընթացակարգերը:

2. Ազգային ժողովի նիստերը գումարվում են Ստեփանակերտ քաղաքում՝ Ազգային ժողովի նստավայրում՝ Փետրվարի 20-ի փողոց, 2 հասցեում: Այլ վայրում նիստ կարող է գումարվել Ազգային ժողովի նախագահի որոշմամբ, բացառությամբ Կանոնակարգով նախատեսված դեպքերի:

3. Ազգային ժողովի աշխատանքային լեզուն հայերենն է: Հայերենին չտիրապետող անձն Ազգային ժողովի և նրա հանձնաժողովների նիստերում, ինչպես նաև խորհրդարանական լուսններում օտար լեզվով կարող է հանդես գալ միայն միաժամանակյա հայերեն թարգմանությամբ:

4. Ազգային ժողովի նիստի ժամանակ դահլիճում կարող են բաժանվել միայն օրակարգում ընդգրկված հարցերի նախագծերը և դրանց կից ներկայացված փաստաթղթերը:

5. Բացառությամբ Ազգային ժողովի նիստը նկարահանելու թույլտվություն ունեցող հավատարմագրված լրատվամիջոցների ներկայացուցիչների և Աշխատակարգի համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների, Ազգային ժողովի նիստի ընթացքում արգելվում է դահլիճ բերել և օգտագործել լուսանկարահանման, կինոնկարահանման, ձայնագրման, տեսագրման, ռադիոկապի կամ հեռախոսակապի սարքեր կամ տեղեկատվության մշակման այլ միջոցներ, բացառությամբ դահլիճում տեղադրված հեռախոսի և համակարգչային տեխնիկայի:

6. Ազգային ժողովի նիստի ժամանակ դահլիճում արգելվում է բջջային և կապի այլ միջոցների օգտագործումը, բացառությամբ դահլիճում տեղադրված հեռախոսի:

7. Ազգային ժողովի հանձնաժողովների նիստերի օրակարգերի նախագծերը և դրանցում ընդգրկված հարցերի նախագծերը նիստից առաջ տրամադրվում են հանձնաժողովի անդամներին:

**II. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԻՍՏՈՒՄ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՆՉՊԵՍ
ՆԱԵՎ ԶԵԿՈՒՑՄԱՄԲ ՀԱՆԴԵՍ ԳԱԼՈՒ, ՀԱՐՑԵՐ ՏԱԼՈՒ, ԵԼՈՒՑԹ ՈՒՆԵՆԱԼՈՒ,
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՆԴԵՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ**

8. Ազգային ժողովի նիստում էլեկտրոնային համակարգով պատգամավորների գրանցումը կատարվում է տասը վայրկյանի ընթացքում: Գրանցված պատգամավորների թիվը մշտապես ցուցադրվում է լուսատախտակի վրա:

9. Ազգային ժողովի նիստում քննարկվող հարցի հիմնական և հարակից զեկուցողները հանդես են գալիս ամբիոնից՝ նիստը նախագահողի հայտարարությամբ:

10. Ազգային ժողովի նիստում հարցերի համար պատգամավորների հերթագրումն իրականացվում է յուրաքանչյուր զեկուցումից, իսկ Կանոնակարգով սահմանված դեպքերում նաև էլույթից հետո: Հիմնական և հարակից զեկուցողները, ինչպես նաև էլույթ ունեցողը հարցերին պատասխանում են ամբիոնից:

11. Հարցերի համար հերթագրումն իրականացվում է էլեկտրոնային համակարգով տասը վայրկյանի ընթացքում գրանցմամբ, որը ցուցադրվում է լուսատախտակին: Էլեկտրոնային համակարգը չգործելու դեպքում հարցերի համար հերթագրումն իրականացնում է նիստը նախագահողը՝ պատգամավորների հայտերի հիման վրա:

12. Պատգամավորները հարցերը տալիս են իրենց հատկացված խոսափողներից՝ ըստ հերթագրման հաջորդականության, նիստը նախագահողի հայտարարությամբ, որտեղ միաժամանակ հիշեցվում է հաջորդ հարց տվողի անունը, ազգանունը:

13. Մտքերի փոխանակության ընթացքում պատգամավորները էլույթ են ունենում ըստ հերթագրման, իսկ հրավիրված անձինք՝ նիստը նախագահողի սահմանած հաջորդականությամբ: Խմբակցությունների ներկայացուցիչների էլույթների հաջորդականությունը որոշվում է ըստ դրանց անդամների թվի փոքրից մեծ:

14. Մտքերի փոխանակության ընթացքում էլույթ ունեցողները հանդես են գալիս ամբիոնից՝ նիստը նախագահողի հայտարարությամբ, որտեղ միաժամանակ հիշեցվում է հաջորդ էլույթ ունեցողի անունը, ազգանունը:

15. Նիստի վարման կարգի վերաբերյալ էլույթով պատգամավորը հանդես է գալիս նախագահողի հայտարարությամբ՝ իրեն հատկացված խոսափողից:

16. Պատգամավորները Կանոնակարգով սահմանված դեպքում հայտարարությամբ հանդես են գալիս ամբիոնից, ըստ հերթագրման հաջորդականության՝ նիստը նախագահողի հայտարարությամբ, որտեղ միաժամանակ հիշեցվում են հայտարարությամբ հանդես եկող հաջորդ պատգամավորի անունը, ազգանունը:

III. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԻՍՏՈՒՄ ԲԱՑ ԵՎ ԳԱՂՏՆԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԶԳՈՐԾԵԼՈՒ ԴԵՊԶՈՒՄ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

17. Ազգային ժողովի նիստում բաց քվեարկությունն իրականացվում է նիստը նախագահողի հայտարարությամբ, էլեկտրոնային համակարգով՝ տասը վայրկյանի ընթացքում: Քվեարկությունն սկսվում է ազդանշանից հետո: Քվեարկության ավարտից հետո քվեարկության արդյունքները տասը վայրկյան պահպանվում են լուսատախտակի վրա:

18. Ազգային ժողովի նիստում գաղտնի քվեարկությունը, ինչպես նաև էլեկտրոնային համակարգը չգործելու դեպքում անվանական քվեարկությունը անցկացվում են հետևյալ կարգով.

1) քվեարկվող հարցը կամ ընտրվող թեկնածուների անունները, ազգանունները հաշվիչ հանձնախմբին է հանձնում Ազգային ժողովի նիստը նախագահողը.

2) քվեարկության ցուցակները կազմվում են, ինչպես նաև քվեաթերթիկները պատրաստվում են հաշվիչ հանձնախմբի հսկողությամբ՝ պատգամավորների ընդհանուր թվին համապատասխան.

3) քվեաթերթիկում նշվում են քվեարկվող հարցը, կամ այբբենական կարգով ընդգրկվում են քվեարկվող թեկնածուների անունները, ազգանունները, իսկ անվանական քվեարկության դեպքում՝ նաև պատգամավորի անունը, ազգանունը.

4) քվեաթերթիկում մեկ թեկնածության կամ հարցի առկայության դեպքում պետք է լինեն «կողմ եմ» և «դեմ եմ» բառերը.

5) հաշվիչ հանձնախմբի անդամը քվեաթերթիկը պատգամավորին է հանձնում ցուցակում նրա ստորագրելուց հետո.

6) պատգամավորը գաղտնի քվեարկության քվեաթերթիկը լրացնում է գաղտնի քվեարկության խցիկում, իսկ անվանական քվեարկության քվեաթերթիկը՝ այն ստանալուց անմիջապես հետո.

7) քվեաթերթիկը լրացնելիս պատգամավորը հաշվիչ հանձնախմբի սահմանած ձևով միատեսակ նշում է կատարում այն թեկնածուի անվան կամ հարցի դիմացի քառանկյունում, որին կողմ է քվեարկում: Մեկ թեկնածուի կամ հարցի քվեարկվելու դեպքում պատգամավորը, եթե կողմ է քվեարկելու, նշում է կատարում «կողմ եմ» բառերի, եթե դեմ՝ «դեմ եմ» բառերի դիմաց:

8) քվեաթերթիկը լրացնելուց հետո պատգամավորը՝

ա. գաղտնի քվեարկության դեպքում քվեաթերթիկը գցում է քվեատուփի մեջ,

բ. անվանական քվեարկության դեպքում խոսափողից հայտարարում է հարցին կամ թեկնածուին կողմ կամ դեմ քվեարկելու իր որոշման մասին, ստորագրում քվեաթերթիկը և հանձնում հաշվիչ հանձնախմբի անդամին:

9) եթե պատգամավորը կարծում է, որ քվեաթերթիկը սխալ է լրացրել կամ վնասել է, ապա կարող է դիմել հաշվիչ հանձնախմբի նախագահին՝ նոր քվեաթերթիկ ստանալու համար: Հաշվիչ հանձնախմբի ղեկավարի հանձնարարությամբ պատգամավորին հատկացվում է նոր քվեաթերթիկ:

10) քվեարկության ավարտից հետո՝ մեկ ժամվա ընթացքում, հաշվիչ հանձնախումբը՝

ա. գաղտնի քվեարկության դեպքում բացում է քվեատուփը, հաշվում է ձայները և կազմում քվեարկության արդյունքների մասին արձանագրություն,

բ. անվանական քվեարկության դեպքում պատգամավորների հայտարարությունների և քվեաթերթիկների հիման վրա հաշվում է ձայները, կազմում քվեարկության արդյունքների մասին արձանագրություն:

19. Քվեարկության արդյունքների արձանագրությունում նշվում են՝

1) քվեարկությանը մասնակցած պատգամավորների ընդհանուր թիվը:

2) գաղտնի քվեարկության դեպքում՝ անվավեր քվեաթերթիկների թիվը:

3) հարցին կամ յուրաքանչյուր թեկնածուին կողմ քվեարկած պատգամավորների ընդհանուր թիվը:

4) հարցին կամ յուրաքանչյուր թեկնածուին դեմ քվեարկած պատգամավորների ընդհանուր թիվը:

5) անվանական քվեարկության դեպքում՝ հարցի կամ թեկնածուի վերաբերյալ յուրաքանչյուր պատգամավորի անվանական քվեարկությունը:

20. Գաղտնի քվեարկության դեպքում հաշվիչ հանձնախմբի որոշմամբ անվավեր են համարվում չսահմանված նմուշի քվեաթերթիկները, ինչպես նաև այն քվեաթերթիկները, որոնցում թողնված են սահմանված թվից ավելի թեկնածուներ, կամ մեկ թեկնածուի դեպքում միաժամանակ թողնված կամ ջնջված են «կողմ եմ» և «դեմ եմ» բառերը, կամ ավելացված են այլ գրառումներ:

21. Հաշվիչ հանձնախմբի նախագահը քվեարկության արձանագրությունն ուղարկում է Աշխատակազմ:

IV. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԻՍՏՈՒՄ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԵԿ ԺԱՄ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ 90 ԸՈՂԵ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՇԽՄԱՆ ԿԱՐԳԸ

22. Ազգային ժողովի նիստում հարցը մեկ ժամ տևողությամբ քննարկվելու դեպքում՝

1) հիմնական և հարակից զեկուցումների համար հատկացվում է մինչև հնգական թույլ:

2) հարցերի, դրանց պատասխանելու, ինչպես նաև արձագանքելու համար հատկացվում է մինչև մեկական թույլ:

3) յուրաքանչյուր զեկուցողի հարցերի, ինչպես նաև պատասխանների և դրանց արձագանքելու ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել երկու զեկուցման դեպքում տասը թույլեն, իսկ երեք զեկուցման դեպքում՝ 15 թույլեն:

4) մտքերի փոխանակության ընթացքում ելույթների համար հատկացվում է մինչև երկուական թույլ:

5) վարման կարգի վերաբերյալ ելույթների համար հատկացվում է 20 վայրկյան.

6) Կանոնակարգով նախատեսված արտահերթ ելույթների, խմբակցությունների մեկական ներկայացուցիչների ելույթների, ինչպես նաև զեկուցողների եզրափակիչ ելույթների իրավունքը պահպանվում է.

7) մտքերի փոխանակության ընթացքում ելույթների ընդհանուր տևողությունը, ներառյալ սույն կետի 5-րդ և 6-րդ ենթակետերում նշված ելույթները, չի կարող գերազանցել երկու զեկուցման դեպքում 40 րոպեն, իսկ երեք զեկուցման դեպքում՝ 30 րոպեն:

23. Ազգային ժողովի նիստում հարցը 90 րոպե տևողությամբ քննարկվելու դեպքում՝

1) հիմնական և հարակից զեկուցումների համար հատկացվում է մինչև հնգական րոպե.

2) հարցերի, դրանց պատասխանելու, ինչպես նաև արձագանքելու համար հատկացվում է մինչև մեկական րոպե.

3) յուրաքանչյուր զեկուցողին հարցերի, ինչպես նաև պատասխանների և դրանց արձագանքելու ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել երկու զեկուցման դեպքում 20 րոպեն, իսկ երեք զեկուցման դեպքում՝ 25 րոպեն.

4) մտքերի փոխանակության ընթացքում ելույթների համար հատկացվում է մինչև երեքական րոպե.

5) վարման կարգի վերաբերյալ ելույթների համար հատկացվում է 30 վայրկյան.

6) Կանոնակարգով նախատեսված արտահերթ ելույթների, խմբակցությունների մեկական ներկայացուցիչների ելույթների, ինչպես նաև զեկուցողների եզրափակիչ ելույթների իրավունքը պահպանվում է.

7) մտքերի փոխանակության ընթացքում ելույթների ընդհանուր տևողությունը, ներառյալ սույն կետի 5-րդ և 6-րդ ենթակետերում նշված ելույթները, չի կարող գերազանցել երկու զեկուցման դեպքում 60 րոպեն, իսկ երեք զեկուցման դեպքում՝ 50 րոպեն:

V. ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻՇՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԳՐՈՒԹՅԱՆԸ ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ

24. Օրենքի նախագիծն Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացվում Ազգային ժողովի նախագահին ուղղված պաշտոնական գրությամբ, որտեղ նշվում են՝

1) նախագծի, իսկ նախագծերի փաթեթի դեպքում՝ նաև մյուս նախագծերի անվանումները, ինչպես նաև դրանք շրջանառության մեջ դնելու հիմքերը՝ Սահմանադրության և Կանոնակարգի համապատասխան նորմերին կատարված հղումներով.

2) հիմնական զեկուցողի անունը, ազգանունը.

3) գրությանը կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

25. Գրությանը կցվում են՝

1) նախագիծը, իսկ նախագծերի փաթեթի դեպքում՝ նաև մյուս նախագծերը.

2) նախագծի ընդունման հիմնավորումը, որտեղ նշվում են առկա խնդիրները, առաջարկվող կարգավորումները և ակնկալվող արդյունքները, ինչպես նաև հեղինակի հայեցողությամբ՝ նախագծերը մշակողների անունները դրանց մշակման համար հիմք հանդիսացած հայեցակարգերի, իրավական ակտերի կամ այլ նյութերի վերաբերյալ տեղեկություններ.

3) տեղեկանք, որտեղ տեսանելի ձևով՝ ջնջված կամ լրացված ներկայացվում են օրենքի հոդվածներում առաջարկվող բոլոր փոփոխությունները և լրացումները:

26. Քաղաքացիական նախաձեռնության գրությանը կից, ի լրումն Աշխատակարգի 25-րդ կետում նշված փաստաթղթերի՝ ներկայացվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստի արձանագրության քաղվածքը, որտեղ նշվում են

քաղաքացիական նախաձեռնության գրանցման տվյալները և լիազոր ներկայացուցչի անունը, ազգանունը:

27. Հանրապետության նախագահի նախաձեռնության գրությանը կից, ի լրումն Աշխատակարգի 25-րդ կետում նշված փաստաթղթերի, ներկայացվում է պետական բյուջեի եկամուտների էական նվազեցման կամ ծախսերի ավելացման մասին Կառավարության եզրակացությունը:

28. Աշխատակարգի 25-րդ կետում նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակներն ուղարկվում են Աշխատակազմի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով: Հանրապետության նախագահին էլեկտրոնային փաստաթղթերն ուղարկում է իր կողմից հաստատված նախագահի աշխատակազմի գործավարության կարգին համապատասխան:

29. Օրենքի նախագիծն Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնելու վերաբերյալ պաշտոնական գրությունն Ազգային ժողովում ստանալուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, Աշխատակազմը գրանցում է գրությունը և դրա հետ Ազգային ժողովի նախագահին է ներկայացնում Աշխատակարգի 24-28-րդ կետերի պահանջներին դրա համապատասխանության մասին տեղեկանք:

VI. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՐՑԵՐԸ ՇՐՋԱՆԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵՆՈՒ ԿԱՐԳԸ

30. Ազգային ժողովի նախագահը Սահմանադրության փոփոխությունների, ինչպես նաև օրենքի նախագիծը շրջանառության մեջ է դնում՝ ուղարկելով գլխադասային հանձնաժողով և Աշխատակազմ, իսկ պատգամավորի կամ քաղաքացիական նախաձեռնության դեպքում՝ նաև Հանրապետության նախագահին:

31. Ազգային ժողովի նախագահն Ազգային ժողովի որոշման, հայտարարության, ուղերձի նախագիծը շրջանառության մեջ է դնում՝ ուղարկելով գլխադասային հանձնաժողով և Աշխատակազմ:

32. Աշխատակազմը նախագիծը ստանալուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, այն գրանցում է Ազգային ժողովում շրջանառության մեջ դրված հարցերի ռեեստրում (այսուհետև՝ Ռեեստր), իսկ գրությունը և դրան կից ներկայացված փաստաթղթերն ուղարկում է Ազգային ժողովի նախագահի տեղակալին, մշտական հանձնաժողովներին և խմբակցություններին:

VII. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ՇՐՋԱՆԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՐՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

33. Սահմանադրության փոփոխությունների նախագծի վերաբերյալ Աշխատակազմի եզրակացությունն Ազգային ժողովի նախագահին և գլխադասային հանձնաժողով է ներկայացվում նախագիծը շրջանառության մեջ դրվելուց հետո՝ երեքշաբաթյա ժամկետում: Եզրակացությունը ներառում է՝

1) նախագիծը Սահմանադրության պահանջներին համապատասխանելու վերաբերյալ փորձաքննության արդյունքները:

2) նախագծի ընդունման առնչությամբ այլ օրենքներում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության կամ դրա բացակայության մասին տեղեկանքը:

34. Օրենքի նախագծի վերաբերյալ Աշխատակազմի եզրակացությունն Ազգային ժողովի նախագահին և գլխադասային հանձնաժողով է ներկայացվում նախագիծը շրջանառության մեջ դրվելուց հետո՝ երեքշաբաթյա ժամկետում: Եզրակացությունը ներառում է՝

1) նախագիծը Սահմանադրության և այլ օրենքների պահանջներին համապատասխանելու վերաբերյալ փորձաքննության արդյունքները:

2) նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության կամ դրա բացակայության մասին տեղեկանքը:

35. Ազգային ժողովի որոշման, հայտարարության կամ ուղերձի նախագծի վերաբերյալ Աշխատակազմի եզրակացությունն Ազգային ժողովի նախագահին և գլխադասային հանձնաժողով է ներկայացվում նախագիծը շրջանառության մեջ դրվելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում: Եզրակացությունը ներառում է՝

1) նախագիծը Սահմանադրության և օրենքների պահանջներին համապատասխանելու վերաբերյալ փորձաքննության արդյունքները:

2) նախագծին առնչվող Ազգային ժողովի այլ որոշման ընդունման անհրաժեշտության կամ դրա բացակայության մասին տեղեկանքը:

36. Աշխատակազմն իր եզրակացությունները մեկ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է գլխադասային հանձնաժողով:

VIII. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ՇՐՋԱՆԱԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՐՎԱԾ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՍԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՐԱՎՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

37. Ազգային ժողովում շրջանառության մեջ դրված, ինչպես նաև առաջին ընթերցմամբ ընդունված օրենքի նախագծի վերաբերյալ գրավոր առաջարկները գլխադասային հանձնաժողովի նախագահին և հիմնական զեկուցողին ներկայացնելու վերաբերյալ պաշտոնական գրությունում նշվում են նախագծի անվանումը, փաստաթղթային կողը և կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

38. Առաջարկները պաշտոնապես ներկայացվում են Աշխատակազմ: Աշխատակազմն առաջարկները ստանալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, այն ուղարկում է գլխադասային հանձնաժողով և նախագծի հեղինակին:

39. Գրությանը կից ներկայացվում են՝

1) առաջարկները (փոփոխությունները, լրացումները) և դրանց հիմնավորումները:

2) լրացվող օրենքի կամ Ազգային ժողովի որոշման նախագիծը, եթե օրենսդրական նախաձեռնությունը կամ օրենքների նախագծերի փաթեթն առաջարկվում է լրացնել նոր նախագծով:

40. Գրությանը կից ներկայացված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակներն ուղարկվում են հիմնական զեկուցողի և գլխադասային հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով: Հանրապետության նախագահին էլեկտրոնային փաստաթղթերն ուղարկում է իր կողմից հաստատված Նախագահի աշխատակազմի գործառնության կարգին համապատասխան:

IX. ԳԼԽԱԴԱՍԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՔՎԵՍԵՐՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

41. Ազգային ժողովում շրջանառության մեջ դրված, ինչպես նաև Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված գրավոր առաջարկները, ինչպես նաև նախագծի քննարկման ընթացքում ներկայացված առաջարկները հանձնաժողովի նիստում քվեարկության են դրվում հետևյալ հերթականությամբ.

1) նախագծերի փաթեթից հանել նախագիծ.

2) նախագծերի փաթեթը համալրել նախագծով.

3) նախագծի որևէ մասն ամբողջությամբ հանել.

4) նախագիծը լրացնել նոր մասով.

5) նախագծի որևէ մաս շարադրել նոր խմբագրությամբ.

6) նախագծի հողվածի որևէ մասում փոփոխություն կամ լրացում կատարել:

42. Այն առաջարկը, որին հանձնաժողովի անդամներից որևէ մեկը չի առարկում, համարվում է ընդունված առանց քվեարկության:

43. Այն առաջարկը, որն իր բովանդակությամբ հակառակ է արդեն ընդունված առաջարկին, քվեարկության չի դրվում:

44. Նախագծի միևնույն մասի վերաբերյալ իրարամերժ առաջարկները քվեարկվում են մրցակցության սկզբունքով հետևյալ կարգով

1) եթե քվեարկության է դրվել երկու առաջարկ և դրանցից ոչ մեկը չի ստացել ընդունման համար անհրաժեշտ թվով ձայներ, ապա առավել շատ ձայներ ստացած առաջարկը նորից է դրվում քվեարկության.

2) եթե քվեարկության են դրվել երկուսից ավելի առաջարկներ և դրանցից ոչ մեկը չի ստացել ընդունման համար անհրաժեշտ թվով ձայներ, ապա անցկացվում է քվեարկության երկրորդ փուլ, որի ժամանակ քվեարկության են դրվում առավել շատ ձայներ ստացած երկու առաջարկները.

3) եթե մեկից ավելի առաջարկ ստացել է ընդունման համար անհրաժեշտ թվով ձայներ, ապա ընդունված է համարվում առավել շատ «կողմ» ձայներ ստացած առաջարկը.

4) եթե մեկից ավելի առաջարկ ստացել է ընդունման համար անհրաժեշտ թվով և հավասար քանակությամբ ձայներ, ապա ընդունված է համարվում առավել քիչ «դեմ» ձայներ ստացած առաջարկը:

X. ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԳԼԽԱՂԱՄԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՄ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

45. Կանոնակարգով նախատեսված դեպքերում լրամշակված օրենքի նախագիծն Ազգային ժողովի կամ գլխադասային հանձնաժողովի քննարկմանը ներկայացվելու վերաբերյալ պաշտոնական գրությունում նշվում են նախագծի անվանումը, փաստաթղթային կողը և կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

46. Լրամշակված նախագիծը պաշտոնապես ներկայացվում է Աշխատակազմ: Աշխատակազմը նախագիծն ստանալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, այն գրանցում է Ռեեստրում, ուղարկում է Ազգային ժողովի նախագահին, գլխադասային հանձնաժողով և տեղադրում Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

47. Գրությանը կից ներկայացվում են՝

1) լրամշակված նախագիծը կամ նախագծերի փաթեթը.

2) նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը, որտեղ լրամշակված նախագծի խմբագրված տարբերակում տեսանելի ձևով՝ ջնջված կամ լրացված, ներկայացվում են համապատասխանաբար՝ շրջանառության մեջ դրված կամ առաջին ընթերցմամբ ընդունված նախագծում կատարված բոլոր փոփոխությունները և լրացումները.

3) Կանոնակարգով սահմանված կարգով նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկների ամփոփաթեթը:

48. Ամփոփաթեթում ընդգրկվում են սահմանված կարգով ներկայացված՝ գրավոր, ինչպես նաև գլխադասային հանձնաժողովի նիստում քվեարկության դրված մյուս առաջարկները, իսկ Կանոնակարգով նախատեսված դեպքում՝ նաև հեղինակի նախաձեռնությամբ նախագծում կատարված բոլոր փոփոխությունները:

49. Ամփոփաթեթի պրոնակներում, ըստ նախագծի մասերի հաջորդականության, նշվում են՝

1) առաջարկի (փոփոխության, լրացման) հեղինակը.

2) նախագծի այն մասը, որին վերաբերում է առաջարկը (փոփոխությունը, լրացումը).

3) առաջարկը (փոփոխությունը, լրացումը).

4) առաջարկը (փոփոխությունը, լրացումը) ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը.

5) առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը:

50. Գրությանը կից ներկայացված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակներն ուղարկվում են գլխադասային հանձնաժողովի և Աշխատակազմի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով: Հանրապետության նախագահն էլեկտրոնային

փաստաթղթերն ուղարկում է իր կողմից հաստատված Նախագահի աշխատակազմի գործավարության կարգին համապատասխան:

51. Գլխադասային հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա լրամշակված նախագիծը, ինչպես նաև Կանոնակարգով սահմանված կարգով այլընտրանքային համարված նախագծերն Ազգային ժողովի նիստերի դահլիճում կարող են բաժանվել գլխադասային հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ:

XI. ԳԼԽԱԴԱՍԱՅԻՆ ԵՎ ՄՅՈՒՍ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԱԽԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

52. Սահմանադրության փոփոխությունների, օրենքների, ինչպես նաև Ազգային ժողովի որոշման, հայտարարությունների, ուղերձների նախագծերի նախնական քննարկման արդյունքում գլխադասային, ինչպես նաև Ազգային ժողովի մյուս մշտական հանձնաժողովները իրենց եզրակացությունն Ազգային ժողովի նախագահին են ուղարկում հանձնաժողովի նիստի արձանագրության քաղվածքով:

53. Նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովի բացասական եզրակացության դեպքում դրա պատճառները նշվում են հանձնաժողովի նիստի արձանագրության քաղվածքում:

XII. ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԴՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

54. Սահմանադրության փոփոխությունների նախագիծն Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնելու վերաբերյալ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի, Հանրապետության նախագահի կամ քաղաքացիական նախաձեռնության ներկայացուցչի պաշտոնական գրությունում նշվում են՝

1) Սահմանադրության փոփոխությունների նախագծի անվանումը և շրջանառության մեջ դնելու հիմքերը՝ Սահմանադրության և Կանոնակարգի համապատասխան նորմերին կատարված հղումներով.

2) հիմնական զեկուցողի անունը, ազգանունը.

3) գրությանը կամ ստորագրաթերթին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

55. Գրությանը կից ներկայացվում են՝

1) Սահմանադրության փոփոխությունների նախագիծը.

2) Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ Ազգային ժողովի որոշման նախագիծը՝ Կանոնակարգով նախատեսված դեպքում.

3) Սահմանադրության փոփոխությանը վերաբերող հարցով Գերագույն դատարանի դիմելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը.

4) Սահմանադրության փոփոխությունների նախագծի հիմնավորումը, որտեղ նշվում են առկա խնդիրները, առաջարկվող կարգավորումները և ակնկալվող արդյունքները, ինչպես նաև հեղինակի հայեցողությամբ՝ նախագիծը մշակողների անունները, դրանց մշակման համար հիմք հանդիսացած հայեցակարգերի, իրավական ակտերի կամ այլ նյութերի վերաբերյալ տեղեկություններ.

5) տեղեկանք, որտեղ տեսանելի ձևով՝ ջնջված կամ լրացված, ներկայացվում են Սահմանադրության հոդվածներում առաջարկվող բոլոր փոփոխությունները:

56. Քաղաքացիական նախաձեռնության գրությանը կից, ի լրումն Աշխատակարգի 55-րդ կետում նշված փաստաթղթերի, ներկայացվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստի արձանագրության քաղվածքը, որտեղ նշվում են

քաղաքացիական նախաձեռնության գրանցման տվյալները և լիազոր ներկայացուցչի անունը, ազգանունը:

57. Հանրապետության նախագահի նախաձեռնության գրությանը կից, ի լրումն Աշխատակարգի 55-րդ կետում նշված փաստաթղթերի, ներկայացվում է պետական բյուջեի եկամուտների էական նվազեցման կամ ծախսերի ավելացման մասին Կառավարության եզրակացությունը:

58. Աշխատակարգի 55-րդ կետում նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակներն ուղարկվում են Աշխատակազմի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով: Հանրապետության նախագահը էլեկտրոնային փաստաթղթերն ուղարկում է իր կողմից հաստատված Նախագահի աշխատակազմի գործավարության կարգին համապատասխան:

59. Պաշտոնական գրությունն Ազգային ժողովում ստանալուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, Աշխատակազմը սահմանված կարգով գրանցում է գրությունը և դրա հետ միասին Ազգային ժողովի նախագահին է ներկայացնում Աշխատակարգի 54-58-րդ կետերի պահանջներին դրա համապատասխանության մասին տեղեկանք:

**XIII. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ
ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾԸ
ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

60. Պետական բյուջեի մասին օրենքի նախագիծն Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնելու վերաբերյալ պաշտոնական գրությունը ներկայացվում է Աշխատակարգի 24-րդ կետին համապատասխան:

61. Գրությանը կցվում են՝

1) պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը, իսկ նախագծերի փաթեթի դեպքում՝ նաև մյուս նախագծերը:

2) «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով նախատեսված փաստաթղթերը:

3) տեղեկանք, որտեղ տեսանելի ձևով ջնջված կամ լրացված ներկայացվում են պետական բյուջեի մասին օրենքի նախագծին կից ներկայացվող օրենքների նախագծերին համապատասխան՝ օրենքների հողվածներում առաջարկվող բոլոր փոփոխությունները և լրացումները:

62. Նախագծում փոփոխություններ կատարելու մասին իրենց առաջարկները պատգամավորները և խմբակցություններն Աշխատակազմի միջոցով ներկայացնում են Հանրապետության նախագահին՝ թղթային, ինչպես նաև էլեկտրոնային կրիչի վրա կամ էլեկտրոնային փոստի միջոցով:

63. Ազգային ժողովում նախագծի քննարկումն ընդմիջելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, նախագծի վերաբերյալ առաջարկները պաշտոնապես՝ թղթային, ինչպես նաև էլեկտրոնային կրիչի վրա կամ էլեկտրոնային փոստի միջոցով, ներկայացվում են Աշխատակազմ, որը առաջարկների ներկայացման ժամկետը լրանալուց հետո՝ մեկ ժամվա ընթացքում, դրանք ուղարկում է Հանրապետության նախագահին:

64. Հանրապետության նախագահը պետական բյուջեի մասին օրենքի լրամշակված նախագիծն Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացնում՝ կցելով ըստ հողվածների հաջորդականության խմբավորված առաջարկների ամփոփաթեթիկը, որում հետևյալ հաջորդականությամբ նշվում են՝

- 1) առաջարկի հեղինակը.
- 2) հողվածի համարը, որին վերաբերում է առաջարկը.
- 3) առաջարկի տեքստը կամ բովանդակությունը.
- 4) առաջարկի վերաբերյալ Կառավարության եզրակացությունը:

**XIV. ԱՌԱՆՁԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԱՌԱՋԱՂԻՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐՈՒԹՅԱՆԸ ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

65. Միջազգային պայմանագիրը վավերացնելու, կասեցնելու կամ չեղյալ հայտարարելու վերաբերյալ օրենքի նախագծի առաջադրման վերաբերյալ պաշտոնական գրությանը կից ներկայացվող փաստաթղթերն են՝

1) վավերացվող, կասեցվող կամ չեղյալ հայտարարվող միջազգային պայմանագիրը,

2) վավերացվող միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների Սահմանադրությանը համապատասխանելու վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը.

3) հիմնավորումը, որտեղ նշվում են միջազգային պայմանագիրը վավերացնելու, կասեցնելու կամ չեղյալ հայտարարելու նպատակներն ու ակնկալվող արդյունքները.

4) վավերացվող միջազգային պայմանագրի և օրենքների միջև հակասությունների առկայության կամ բացակայության մասին տեղեկանքը.

5) միջազգային պայմանագիրը վավերացնելու, կասեցնելու կամ չեղյալ հայտարարելու առնչությամբ օրենքներում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտության կամ դրա բացակայության մասին տեղեկանքը:

66. Համաներման մասին օրենքի նախագծի առաջադրման դեպքում, ի լրումն Աշխատակարգի 24-րդ և 25-րդ կետերում նշված փաստաթղթերի, ներկայացվում է տեղեկանք նախորդ համաներման ակտի կիրառման վերաբերյալ, որում ներառվում են պատժից ազատված անձանց, քրեական հետապնդման դադարեցման, նշանակված պատժաչափերի կրճատման, կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու մեջ մեղադրված կամ դատապարտված անձանց թվի վերաբերյալ վիճակագրական տեղեկություններ:

**XV. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻՇՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

67. Ազգային ժողովի որոշման նախագիծն Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնելու վերաբերյալ պաշտոնական գրությունում նշվում են՝

1) նախագծի անվանումը և շրջանառության մեջ դնելու դիմումը՝ Սահմանադրության և Կանոնակարգի համապատասխան նորմերին կատարված հղումներով.

2) հիմնական զեկուցողի անունը, ազգանունը.

3) գրությանը կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

68. Գրությանը կից ներկայացվում են՝

1) նախագիծը.

2) նախագծի ընդունման հիմնավորումը, որտեղ նշվում են դրա նպատակը, ինչպես նաև հեղինակի հայեցողությամբ՝ նախագիծը մշակողների անունները, դրա մշակման համար հիմք հանդիսացած իրավական ակտերի կամ այլ նյութերի վերաբերյալ տեղեկություններ.

3) Կանոնակարգով նախատեսված այլ փաստաթղթեր:

69. Ազգային ժողովի գործունեության կազմակերպման հարցերով որոշումների նախագծերին կից հիմնավորում կարող է չներկայացվել:

70. Ազգային ժողովի որոշման նախագիծն Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնելու վերաբերյալ պաշտոնական գրությունն Ազգային ժողովում ստանալուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, Աշխատակազմը գրանցում է գրությունը և դրա հետ միասին Ազգային ժողովի նախագահին է ներկայացնում Աշխատակարգի 67-րդ և 68-րդ կետերի պահանջներին դրա համապատասխանության մասին տեղեկանք:

**XVI. ՕՐԵՆՔԻ ԿԱՍ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԵՏ ԿԱՆՉԵԼՈՒԻ,
ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԿԱԶՄԻՑ ԴՈՒՐՄ
ԳԱԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

71. Հեղինակը կարող է օրենքի կամ Ազգային ժողովի որոշման նախագիծը հետ կանչել Ազգային ժողովի նախագահին ուղղված գրավոր դիմումով կամ Ազգային ժողովի, գլխադասային հանձնաժողովի նիստում հանդես գալով նախագիծը հետ կանչելու վերաբերյալ հայտարարությամբ, որը հավաստվում է համապատասխան նիստի արձանագրությամբ:

72. Եթե հիմնական զեկուցողը դուրս է եկել պատգամավորների նախաձեռնության հեղինակների կազմից, կամ նրա պատգամավորական լիազորությունները դադարել կամ դադարեցվել են, ապա հիմնական զեկուցողի լիազորություններն անցնում են նախաձեռնության այլ հեղինակի՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ազգային ժողովի նախագահին:

**XVII. ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑԱՊԵՆՏՆԵՐԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ-
ԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՂԱՄՆԵՐԻՆ ՈՒՂԱՐԿԵԼԸ**

73. Խմբակցության գրավոր հարցապնդումը, որին կցվում է խմբակցության որոշումը, հանձնվում է Աշխատակազմ, որը 24 ժամվա ընթացքում այն ուղարկում է Հանրապետության նախագահին կամ կառավարության համապատասխան անդամին: Հարցապնդմանը կից կարող են ներկայացվել դրան առնչվող տեղեկանքներ, եզրակացություններ, տեղեկատվական ու վերլուծական այլ նյութեր:

74. Հարցապնդման պատասխանը ստանալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, Աշխատակազմն այն ուղարկում է Ազգային ժողովի նախագահին, նրա տեղակալին, ինչպես նաև խմբակցություններ, մշտական հանձնաժողովներ:

**XVIII. ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՅՑԸ ԵՎ ԴՐԱ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ
ՊԱՏԱՄԽԱՆՆԵՐՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

75. Աշխատակազմը քննիչ հանձնաժողովի զեկույցը մեկ շաբաթվա ընթացքում ուղարկում է զեկույցում նշված իրավասու մարմիններ և պաշտոնատար անձանց:

76. Զեկույցի վերաբերյալ պատասխաններն ստացվելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, Աշխատակազմն այն ուղարկում է Ազգային ժողովի նախագահի տեղակալին, խմբակցություններ, մշտական հանձնաժողովներ:

XIX. ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ

77. Մշտական հանձնաժողովի ստեղծած աշխատանքային խմբում կարող են ընդգրկվել պատգամավորը, ինչպես նաև հանձնաժողովի, Ազգային ժողովի աշխատակազմի փորձագետը (մասնագետը), և այլ մասնագետներ:

78. Աշխատանքային խմբի խնդիրները, գործունեության ժամկետներն ու կարգը սահմանվում է, ինչպես նաև աշխատանքային խմբի ղեկավարը նշանակվում է մշտական հանձնաժողովի որոշմամբ:

79. Աշխատանքային խմբի ղեկավարը կազմակերպում և ղեկավարում է նրա աշխատանքները, ինչպես նաև կատարում է հանձնաժողովի նախագահի հանձնարարականները:

80. Իր գործունեության արդյունքների մասին աշխատանքային խումբը սահմանված ժամկետում զեկուցում է հանձնաժողովի նիստում:

**XX. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ
ԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՐՑՈՒՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓՄԱՆ ԿԱՐԳԸ**

81. Լսումները հրավիրելու վերաբերյալ Ազգային ժողովի նախագահի, մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովի, ինչպես նաև խմբակցության որոշմամբ սահմանվում են լսումների օրը, ժամը, անցկացման վայրը և ընթացակարգը:

82. Լսումների հրավիրման մասին հանձնաժողովի, ինչպես նաև խմբակցության որոշումն ուղարկվում է Ազգային ժողովի նախագահին:

83. Լսումների վերաբերյալ տեղեկատվությունը դրանց անցկացման օրվանից առնվազն երեք աշխատանքային օր առաջ տրամադրվում է զանգվածային լրատվության միջոցներին:

84. Լսումներ հրավիրող հանձնաժողովը կամ խմբակցությունը կարող է նախապատրաստել իր հրավիրած լսումների թեմայի վերաբերյալ ներկայացված գրավոր ելույթներ, առաջարկներ, եզրակացություններ, տեղեկանքներ, ինչպես նաև լսումների արդյունքներն ամփոփող այլ նյութեր, որոնք կարող են հրապարակվել հանձնաժողովի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի նախագահի համաձայնությամբ:

**XXI. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԸՆՏՐՎՈՂ ՊԱՇՏՈՆՆԵՐՈՒՄ
ՍՈՒՋԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

85. Գերագույն դատարանի նախագահի և դատավորների թեկնածու առաջադրելու մասին գրավոր դիմումին կցվում են թեկնածուի՝

1) առաջադրման մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումը.

2) անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

3) բարձրագույն իրավաբանական կրթության առկայությունը հավաստող փաստաթղթի պատճենը.

4) կենսագրական տվյալները պարունակող քարտ՝ իրավաբանի որակավորումը ստանալուց հետո թեկնածուի իրականացրած մասնագիտական գործունեության նկարագրությամբ՝ կցելով համապատասխան ապացույցներ, այդ թվում՝ պաշտոնի անձնագիր կամ այլ փաստաթղթեր, որոնք հավաստում են մասնագիտական իրավաբանական ստաժ դիտարկվող աշխատանքում աշխատանքային պարտականությունները.

5) կենսագրությունը.

6) պաշտոնում նշանակվելու համար գրավոր համաձայնությունը.

7) օրենքով սահմանված այլ պահանջների ապահովման վերաբերյալ փաստաթղթեր:

86. Վերաքննիչ դատարանի նախագահի և դատավորների թեկնածու առաջադրելու մասին գրավոր դիմումին կցվում են թեկնածուի՝

1) առաջադրման մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումը.

2) անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

3) բարձրագույն իրավաբանական կրթության առկայությունը հավաստող փաստաթղթի պատճենը.

4) կենսագրությունը.

5) պաշտոնում նշանակվելու համար գրավոր համաձայնությունը.

6) օրենքով սահմանված այլ պահանջների ապահովման վերաբերյալ փաստաթղթեր:

87. Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի նախագահի և դատավորների թեկնածուների առաջադրման գրավոր դիմումին կցվում են յուրաքանչյուր թեկնածուի՝

1) առաջադրման մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումը.

2) անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

3) բարձրագույն իրավաբանական կրթության առկայությունը հավաստող փաստաթղթի պատճենը.

4) կենսագրությունը.

5) պաշտոնում նշանակվելու համար գրավոր համաձայնությունը.

6) օրենքով սահմանված այլ պահանջների ապահովման վերաբերյալ փաստաթղթեր:

88. Բարձրագույն դատական խորհրդի մեկ անդամի թեկնածու առաջադրելու մասին խմբակցության որոշմանը կցվում են թեկնածուի՝

1) անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

2) բարձրագույն իրավաբանական կրթությունը հավաստող փաստաթղթի պատճենը.

3) կենսագրական տվյալները պարունակող քարտ՝ իրավաբանի որակավորում ստանալուց հետո թեկնածուի իրականացրած մասնագիտական կամ գիտական, կրթական գործունեության նկարագրությամբ՝ կցելով համապատասխան ապացույցներ.

4) գիտական աստիճանի առկայության դեպքում՝ հավաստող փաստաթուղթ.

5) մասնագիտական աշխատանքային ստաժը հավաստող փաստաթղթերը.

6) կենսագրությունը.

7) պաշտոնում նշանակվելու համար գրավոր համաձայնությունը.

8) օրենքով սահմանված այլ պահանջների ապահովման վերաբերյալ փաստաթղթեր:

89. Գլխավոր դատախազի թեկնածու առաջադրելու մասին Հանրապետության նախագահի պաշտոնական գրությունը կցվում են թեկնածուի՝

1) անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

2) բարձրագույն իրավաբանական կրթությունը հավաստող փաստաթղթի պատճենը.

3) կենսագրական տվյալները պարունակող քարտ՝ իրավաբանի որակավորում ստանալուց հետո թեկնածուի իրականացրած մասնագիտական գործունեության նկարագրությամբ՝ կցելով համապատասխան ապացույցներ, այդ թվում՝ պաշտոնի անձնագիր կամ այլ փաստաթղթեր, որոնք հավաստում են մասնագիտական իրավաբանական ստաժ դիտարկվող աշխատանքում աշխատանքային պարտականությունները.

4) կենսագրությունը.

5) պաշտոնում ընտրվելու համար գրավոր համաձայնությունը.

6) օրենքով սահմանված այլ պահանջների ապահովման վերաբերյալ փաստաթղթեր:

90. Իրավասու մշտական հանձնաժողովի Մարդու իրավունքների պաշտպանի թեկնածու առաջադրելու մասին որոշմանը կցվում են թեկնածուի՝

1) առաջադրման մասին խմբակցության որոշումը.

2) անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

3) վերջին հինգ տարում միայն Արցախի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու և վերջին հինգ տարում Արցախի Հանրապետությունում մշտապես բնակվելու մասին տեղեկանքը.

4) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի պատճենը.

5) կենսագրությունը.

6) պաշտոնում ընտրվելու համար գրավոր համաձայնությունը.

7) օրենքով սահմանված այլ պահանջների ապահովման վերաբերյալ փաստաթղթեր:

91. Իրավասու մշտական հանձնաժողովի Հաշվեքննիչ պալատի նախագահի կամ անդամի թեկնածու առաջադրելու մասին որոշմանը կցվում են թեկնածուի՝

1) առաջադրման մասին խմբակցության որոշումը.

2) անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

3) վերջին հինգ տարում միայն Արցախի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու և վերջին հինգ տարում Արցախի Հանրապետությունում մշտապես բնակվելու մասին տեղեկանքը.

4) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի պատճենը.

5) կենսագրությունը.

6) պաշտոնում ընտրվելու համար գրավոր համաձայնությունը.

7) օրենքով սահմանված այլ պահանջների ապահովման վերաբերյալ փաստաթղթեր:

92. Աշխատակազմի կողմից գրանցվելուց հետո պաշտոնում թեկնածուների առաջադրման փաստաթղթերը ներկայացվում են Ազգային ժողովի նախագահին, իսկ Կանոնակարգով նախատեսված դեպքերում՝ Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի նախագահին:

XXII. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ, ՆՐԱ ՀԱՆՃՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻՑ ԿԱՍ ՀՐԱՎԻՐԱԾ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐԻՑ ՊԱՏՊԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԲՆՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

93. Ազգային ժողովի նիստերից, նրա հանձնաժողովի նիստերից կամ հրավիրած խորհրդարանական լուսններից պատգամավորի բացակայությունները հաշվառում է Աշխատակազմը:

94. Յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո՝ տասնօրյա ժամկետում, հանձնաժողովի նախագահն Ազգային ժողովի նախագահին է ներկայացնում այդ ամսվա ընթացքում հանձնաժողովի նիստերից կամ հրավիրած խորհրդարանական լուսններից հանձնաժողովի անդամների բացակայության մասին տեղեկանք:

95. Պատգամավորի մասնակցությունն Ազգային ժողովում քվեարկություններին հաշվառում է Աշխատակազմը, որը յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ավարտից հետո՝ մեկ շաբաթվա ընթացքում, Ազգային ժողովի նախագահին է ներկայացնում քվեարկություններից բացակայած պատգամավորների վերաբերյալ տեղեկանք՝ դրան կցելով բացակայությունները հարգելի համարելու հիմքերը:

96. Աշխատակազմը յուրաքանչյուր ամսվա առաջին շաբաթվա ընթացքում, ինչպես նաև յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ավարտից հետո՝ մեկ շաբաթվա ընթացքում, պատգամավորների և խմբակցությունների պաշտոնական էլեկտրոնային փոստերի հասցեներով ուղարկում է համապատասխան տեղեկանքներ՝ նախորդ ամսվա և նախորդ օրացուցային կիսամյակի քվեարկություններից պատգամավորների բացակայության մասին:

XXIII. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԼՈՒՄԱԲԱՆՈՒՄԸ

97. Ազգային ժողովի նիստերի՝ Կանոնակարգով նախատեսված դեպքերում տեսագրությամբ հեռարձակումը իրականացվում է Արցախի Հանրային հեռուստա-ռադիոընկերության միջոցով:

98. Զանգվածային լրատվության միջոցներով Ազգային ժողովի աշխատանքի լուսաբանումը կազմակերպում է Աշխատակազմը, որը՝

1) կազմակերպում է Ազգային ժողովի պաշտոնական հաղորդագրության ենթակա տեղեկատվական տեսանյութերի հեռարձակումը Հանրային հեռուստառադիոընկերության միջոցով.

2) անցկացնում է Ազգային ժողովի նախագահի, նրա տեղակալի, հանձնաժողովների, խմբակցությունների, Ազգային ժողովի պատվիրակությունների և գործուղման մեկնած պատգամավորների ձեպագրույցներ, մամուլի ասուլիսներ.

3) պատրաստում է տեղեկատվական բնույթի այլ նյութեր:

99. Ազգային ժողովի, նրա հանձնաժողովների և խմբակցությունների խորհրդարանական գործունեության լուսաբանումն իրականացվում է «Խորհրդարանական ժամ»

հեռուստահաղորդաշարի միջոցով: Մինևույն հաղորդման ընթացքում հանդես գալու համար հանձնաժողովներին այբբենական հերթականությամբ և խմբակցություններին՝ փոքրից մեծ, հավասար մասնակցությամբ տրամադրվում է մինչև երկուական թույլ, որից հետո մինչև 15 թույլ լուսաբանվում են խորհրդարանական իրադարձությունները: «Խորհրդարանական ժամ» հեռուստահաղորդաշարը հեռարձակվում է Ազգային ժողովի նստաշրջանների ընթացքում Հանրային հեռուստառադիոընկերությամբ: Պատգամավորական հայտարարությունների և պատգամավորների բանավոր հարցերի տեսագրությունները լուսաբանվում են և հեռարձակվում Հանրային հեռուստառադիոընկերության միջոցով՝ առաջիկա կիրակի օրը:

100. Կանոնակարգով նախատեսված նիստերի տեսագրությունների, ինչպես նաև Ազգային ժողովի նիստերի ուղիղ հեռարձակումների և Ազգային ժողովի որոշմամբ սահմանված դեպքերում Ազգային ժողովի նիստերի տեսագրությունները, ձայնագրությունները իրականացնում է Հանրային հեռուստառադիոընկերությունը:

101. Ազգային ժողովի գործունեության մասին պաշտոնական հաղորդագրությունների, տեղեկատվությունների վերաբերյալ Ազգային ժողովի նախագահին առաջարկ ներկայացնելու իրավունք ունեն Ազգային ժողովի նախագահի տեղակալը, խմբակցությունների ղեկավարները և հանձնաժողովների նախագահները:

XXIV. ՌԵԵՍՏՐԸ

102. Ազգային ժողովում շրջանառության մեջ դրված Սահմանադրության փոփոխությունների, օրենքների նախագծերը, ինչպես նաև Ազգային ժողովի որոշման նախագծերն Աշխատակազմի կողմից գրանցվում են Ռեեստրում, որը տեղադրվում է Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

103. Ռեեստրը բաղկացած է հետևյալ բաժիններից

- 1) հերթական նստաշրջանի օրակարգում դեռևս չընդգրկված հարցեր.
- 2) հերթական նստաշրջանի օրակարգում ընդգրկված հարցեր.
- 3) ամբողջությամբ ընդունված հարցեր:

104. Ռեեստրում գրանցված նախագծի 1-ին էջի վերևի ձախ անկյունում դրվում է փաստաթղթային կոդ, որը կազմված է միմյանցից գծիկներով բաժանված հետևյալ մասերից.

1) ներկայացնողի անվանման հապավումը («Պ»՝ պատգամավորի նախաձեռնությունը, «Ն»՝ Հանրապետության նախագահի նախաձեռնությունը, «Ք»՝ քաղաքացիական նախաձեռնությունը).

2) Ռեեստրում հերթական համարը.

3) շրջանառության մեջ դրվելու օրը, ամիսը և տարին.

4) գլխադասային հանձնաժողովի անվանման հապավումը.

5) փաստաթղթի տեսակը ներկայացնող թվերը («010»՝ Սահմանադրության փոփոխությունների նախագիծ, «011»՝ օրենքի նախագիծ, «012»՝ Ազգային ժողովի որոշման նախագիծ կամ միջազգային պայմանագիր, «013»՝ Ազգային ժողովի հայտարարության նախագիծ, «014»՝ Ազգային ժողովի ուղերձի նախագիծ).

6) Սահմանադրության փոփոխությունների կամ օրենքի նախագծի քննարկման ընթացքը ներկայացնող թիվը («0»՝ դեռևս չի քննարկվել կամ քննարկվել է, սակայն դեռևս չի քվեարկվել, «1»՝ առաջին ընթերցմամբ ընդունվել է, «1ամբ.»՝ առաջին ընթերցմամբ և ամբողջությամբ, «2ամբ.»՝ երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է):

105. Օրենքների նախագծերի փաթեթի դեպքում առաջադրված օրենքի նախագիծն ունենում է Ռեեստրում նախագծերի փաթեթի գրանցման հերթական համարը, իսկ մյուս նախագծերն ունենում են նաև այդ համարին ավելացված լրացուցիչ համարներ:

106. Եթե հեղինակը ներկայացնում է օրենքի կամ Ազգային ժողովի որոշման նախագծի լրամշակված տարբերակ, ապա փաստաթղթային կոդում նշվում է նաև

լրամշակված տարբերակը պաշտոնապես ներկայացնելու ամսաթիվը, իսկ Ռեեստրում տեղադրվում է լրամշակված նախագծի տեքստը:

107. Եթե Սահմանադրության փոփոխությունների, օրենքի կամ Ազգային ժողովի որոշման նախագծի հեղինակները միանում են Ռեեստրում տեղադրված մեկ այլ նախագծի, ապա միավորված նախագիծը (նախագծերի փաթեթը) ունենում է Ռեեստրում տեղադրված բոլոր նախագծերի փաստաթղթային կողերը, իսկ Ռեեստրում հրապարակվում է միասնական տեքստը:

108. Ռեեստրում ընդգրկված նախագծի անվանումը հիշատակելիս (արտահայտելիս, այլ փաստաթղթում նշելիս, հղումներ կատարելիս), այդ թվում՝ նախագծի վերաբերյալ գրավոր եզրակացություններ կամ առաջարկություններ ներկայացնելիս, նախագիծն Ազգային ժողովի օրակարգերի նախագծերում ընդգրկելիս, ինչպես նաև առաջին ընթերցմամբ ընդունված նախագիծն իրավասու մարմիններ ուղարկելիս նշվում է նաև փաստաթղթային կողը: Նախագծերի փաթեթի անվանումը հիշատակելիս կարող է նշվել միայն առաջադրված նախագծի փաստաթղթային կողը:

XXV. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻ ՍՂԱԳՐՈՒՄԸ

109. Ազգային ժողովի նիստի սղագրությունն ապահովում է Աշխատակազմը:

110. Ազգային ժողովի հրապարակային նիստի սղագրությունը կարող է հրապարակվել, իսկ փակ նիստի սղագրությունը պահվում է գաղտնի փաստաթղթերի պահպանման ռեժիմով:

111. Ազգային ժողովի հերթական նիստերի, արտահերթ նստաշրջանի և արտահերթ նիստի ավարտից հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, այդ նիստերի սղագրությունները և ձայնագրություններն ուղարկվում են Ազգային ժողովի գրադարան և տեղադրվում Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում, իսկ մեկ ամիս հետո՝ տեղափոխվում Ազգային ժողովի արխիվ:

112. Ազգային ժողովի նիստում յուրաքանչյուր ելույթ ունեցող իրավունք ունի Ազգային ժողովի գրադարանում մեկ ամսվա ընթացքում ծանոթանալու իր ելույթի սղագրությանը և ստուգելու դրա ճշտությունը:

113. Ելույթ ունեցողի կողմից իր ելույթի սղագրության մեջ տեղ գտած տեխնիկական անճշտությունները կարող են ուղղվել միայն Ազգային ժողովի նախագահի թույլտվությամբ:

XXVI. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԸ

114. Օտարերկրյա պետություն գործուղման մեկնած պատգամավորը, խորհրդարանական պատվիրակությունները և բարեկամական խմբերը վերադառնալուց հետո՝ տասնօրյա ժամկետում՝

1) Ազգային ժողովի նախագահին ներկայացնում են գրավոր հաշվետվություն, որն ուղարկվում է իրավասու մշտական հանձնաժողով:

2) պարտավոր են հանդես գալ ճեպագրույցով կամ մամուլի ասուլիսով:

115. Իրավասու մշտական հանձնաժողովը յուրաքանչյուր հերթական նստաշրջանն ավարտվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, ամփոփում և Ազգային ժողովի նախագահին է ներկայացնում միջխորհրդարանական կապերի վերաբերյալ տեղեկանք, որը ներառում է միջխորհրդարանական համաձայնագրերի կատարման ընթացքի, ինչպես նաև խորհրդարանական պատվիրակությունների և բարեկամական խմբերի աշխատանքի վերաբերյալ տեղեկություններ:

**Արցախի Հանրապետության
Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար՝**

Գ. ԺԱՄՉԱՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

16 հունիսի 2017թ.

N 429-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի N 29-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***ն ր ն շ ու մ է***

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 26-ի «Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցումը շարունակելու կարգը հաստատելու մասին» N 29-Ն որոշմամբ հաստատված հավելվածներում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 1-ին հավելվածի 4-րդ և 8-րդ կետերում «կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության և սպորտի» բառերով.

2) 1-ին հավելվածի 4-րդ կետից հանել 2-րդ նախադասությունը.

3) 2-րդ և 3-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 1
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2017 թվականի հունիսի 16-ի N 429-Ն որոշման

«Հավելված 2
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
«26» հունվարի 2010 թվականի թիվ 29-Ն որոշման

ՑԱՆԿ

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵՎ ԴՐԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՈՐՈՆՑ ԳԾՈՎ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ Է
ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԹԱՄԱՐԱ ՔԱՄԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈՒԵՁ

- 0402 Մանկաբարձական գործ
- 0405 Դեղագործություն
- 0406 Քույրական գործ
- 0418 Բուժական գործ զինված ուժերում

ՇՈՒՇԻԻ ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈՒԵՁ

- 0210 Թարգմանություն և սպասարկման կազմակերպում
- 0312 Դասավանդում տարրական դասարաններում
- 0514 Դիզայն ըստ ճյուղերի
- 0515 Զարդարային-կիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ
- 0518 Մոցիալ-մշակութային գործունեություն և ժողովրդական գեղարվեստական ստեղծագործություն
- 0601 Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ
- 2014 Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում
- 2307 Զբոսաշրջություն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՄԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

- 0601 Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ
- 0602 Մենեջմենթ (Կառավարում)
- 0603 Ֆինանսներ
- 0612 Ապրանքագիտություն
- 2401 Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում
- 2710 Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա
- 2819 Սպառողական ապրանքների որակի փորձաքննություն
- 3101 Հողաշինարարություն
- 3102 Գյուղատնտեսագիտություն
- 3103 Անասնաբուծություն
- 3104 Անասնաբուծություն

- 3106 Գյուղատնտեսության մեքենայացում
- 3204 Շրջակա միջավայրի պահպանում և բնական պաշարների արդյունավետ օգտագործում
- 3205 Հողերի բարելավում, հողավերականգնում և պահպանություն

**«ՇՈՒՇԻՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԻՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ**

- 0601 Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ
- 2401 Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում
- 2916 Քաղաքաշինական կադաստր
- 3102 Գյուղատնտեսագիտություն
- 3104 Անասնաբուժություն
- 3106 Գյուղատնտեսության մեքենայացում

**ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԻՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ**

- 0207 Թարգմանություն և գործավարություն
- 0302 Հայոց լեզվի դասավանդում
- 0303 Ռուսաց լեզվի դասավանդում
- 0307 Ֆիզիկական կուլտուրա և սպորտ
- 0312 Դասավանդում տարրական դասարաններում
- 0313 Նախադպրոցական կրթություն
- 0601 Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ
- 0602 Մենեջմենթ (Կառավարում)
- 0603 Ֆինանսներ
- 2203 Հաշվողական տեխնիկա և ավտոմատացված համակարգերի ծրագրավորում
- 2307 Զբոսաշրջություն
- 2401 Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում»:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 2
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2017 թվականի հունիսի 16 -ի N 429-Ն որոշման

«Հավելված 3
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
«26» հունվարի 2010 թվականի թիվ 29-Ն որոշման

Ց Ա Ն Կ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵՎ ԴՐԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՈՐՈՆՑ ԳԾՈՎ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ Է
ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ**

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

- 011301.00.6** **Ընդհանուր մանկավարժություն**
- 011301.01.6* *Տարրական մանկավարժություն և մեթոդիկա*
- 011401.00.6** **Մասնագիտական մանկավարժություն**
- 011401.01.6* *Կենսաբանություն*
- 011401.02.6* *Քիմիա*
- 011401.09.6* *Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ*
- 011401.11.6* *Կերպարվեստ*
- 011401.16.6* *Նախնական զինվորական պատրաստություն*
- 011401.19.6* *Հայոց լեզու և գրականություն*
- 011401.20.6* *Ռուսաց լեզու և գրականություն*
- 011401.21.6* *Անգլերեն լեզու և գրականություն*
- 023201.00.6** **Լեզվաբանություն**
- 023201.01.6* *Թարգմանչական գործ (անգլերեն և հայերեն լեզուներ)*
- 031101.00.6** **Տնտեսագիտություն**
- 031101.01.6* *Տնտեսագիտություն*
- 041101.00.6** **Հաշվապահական հաշվառում և հարկում**
- 041101.01.6* *Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)*
- 041201.00.6** **Ֆինանսներ**
- 041201.01.6* *Ֆինանսներ (ըստ ոլորտի)*
- 053101.00.6** **Քիմիա**
- 053101.02.6* *Դեղագործական քիմիա*
- 061101.00.6** **Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)**
- 061101.02.6* *Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա*
- 061105.00.6** **Տեղեկատվական տեխնոլոգիաներ**
- 061105.01.6* *Տեղեկատվական տեխնոլոգիաներ*
- 101501.00.6** **Զբոսաշրջություն**
- 101501.01.6* *Զբոսաշրջություն*

«ՇՈՒՇԻՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

021201.00.6	Դիզայն
<i>021201.01.6</i>	<i>Դիզայն</i>
041801.00.6	Ագրոբիզնես
<i>041801.01.6</i>	<i>Ագրոբիզնես</i>
061105.00.6	Տեղեկատվական տեխնոլոգիաներ
<i>061105.01.6</i>	<i>Տեղեկատվական տեխնոլոգիաներ</i>
071403.00.6	Ռադիոտեխնիկա և կապ
<i>071403.01.6</i>	<i>Ռադիոտեխնիկա և կապ</i>
071601.00.6	Տրանսպորտային համակարգեր
<i>071601.03.6</i>	<i>Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում</i>
071602.00.6	Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ
<i>071602.01.6</i>	<i>Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ</i>
081101.00.6	Ագրոնոմիա
<i>081101.01.6</i>	<i>Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա</i>
084101.00.6	Անասնաբուժություն
<i>084101.01.6</i>	<i>Անասնաբուժություն</i>

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

011301.00.6	Ընդհանուր մանկավարժություն
<i>011301.01.6</i>	<i>Տարրական մանկավարժություն և մեթոդիկա</i>
011401.00.6	Մասնագիտական մանկավարժություն
<i>011401.09.6</i>	<i>Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ</i>
<i>011401.16.6</i>	<i>Նախնական զինվորական պատրաստություն</i>
<i>011401.19.6</i>	<i>Հայրց լեզու և գրականություն</i>
<i>011401.20.6</i>	<i>Ռուսաց լեզու և գրականություն</i>
031101.00.6	Տնտեսագիտություն
<i>031101.01.6</i>	<i>Տնտեսագիտություն</i>
061105.00.6	Տեղեկատվական տեխնոլոգիաներ
<i>061105.01.6</i>	<i>Տեղեկատվական տեխնոլոգիաներ</i>

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ՄԵՍԼՈՊ ՄԱՇՏՈՑ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

011301.00.6	Ընդհանուր մանկավարժություն
<i>011301.01.6</i>	<i>Տարրական մանկավարժություն և մեթոդիկա</i>
011401.00.6	Մասնագիտական մանկավարժություն
<i>011401.19.6</i>	<i>Հայրց լեզու և գրականություն</i>
<i>011401.20.6</i>	<i>Ռուսաց լեզու և գրականություն</i>
<i>011401.21.6</i>	<i>Անգլերեն լեզու և գրականություն</i>
023201.00.6	Լեզվաբանություն
<i>023201.01.6</i>	<i>Թարգմանչական գործ (անգլերեն և հայերեն լեզուներ)</i>
031101.00.6	Տնտեսագիտություն
<i>031101.01.6</i>	<i>Տնտեսագիտություն</i>
041301.00.6	Կառավարում
<i>041301.01.6</i>	<i>Կառավարում (ըստ ոլորտի)</i>
061101.00.6	Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)
<i>061101.01.6</i>	<i>Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)</i>

061104.00.6 Տեղեկատվական համակարգեր
061104.01.6 Տեղեկատվական համակարգեր

ՄՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՅՈՒՐՁՅԱՆ» ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

021201.00.6 Դիզայն
021201.01.6 Դիզայն»:

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

26 հունիսի 2017թ.

N 459-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵՆՈՒՄ ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
26-Ի N 865-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ շ ու մ է**.

1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի N 3 հավելվածի ցուցանիշներում կատարել վերաբաշխում ու լրացում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 865-Ն որոշման N 3 հավելվածի և N 2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ և լրացում՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի մայիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 1
 Լեռնային Ղարաբաղի
 Հանրապետության կառավարության
 2017 թվականի հունիսի 26-ի N 459-Ն որոշման

**«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
 ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 3
 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆ ՈՒ ԼՐԱՑՈՒՄԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ
 ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ
 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 865-Ն ՈՐՈՇՄԱՆ N 3 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ
 ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄԸ**

(հազ. դրամ)

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
ԸՆԴԱՄԵՆԸ	-	-	-	-
այդ թվում՝				
Փոխառու գույք միջոցներ	-	(1 100 000,0)	(1 100 000,0)	(1 100 000,0)
1. Վարկերի և փոխառությունների ստացում	-	(1 100 000,0)	(1 100 000,0)	(1 100 000,0)
2. Մտացված վարկերի և փոխառությունների մարում	-	-	-	-
Ֆինանսական գույք ակտիվներ	-	1 100 000,0	1 100 000,0	1 100 000,0
1. Բաժնետոմսերի իրացումից մուտքեր	-	1 100 000,0	1 100 000,0	1 100 000,0

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 2
 Լեռնային Ղարաբաղի
 Հանրապետության կառավարության
 2017 թվականի հունիսի 26-ի N 459-Ն որոշման

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 865-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ
 N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազ.դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՄԵՐ	-	-	-	-
			այդ թվում՝				

01			ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՑՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	(613 971,0)	(89 971,0)	-
	1		Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ	-	-	24 500,0	-
		2	Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ	-	-	24 500,0	-
		02	Ակցիզային դրոշմանիշերի և դրոշմապահիտակների ձեռքբերում	-	-	24 500,0	-
			ԼՂՀ ֆինանսների նախարարություն	-	-	24 500,0	-
	7		Պետական պարտքի գծով գործառնություններ	-	(613 971,0)	(114 471,0)	-
		1	Պետական պարտքի գծով գործառնություններ	-	(613 971,0)	(114 471,0)	-
		01	Ներգրավված փոխառու միջոցների սպասարկման ծախսեր (տոկոսավճարներ)	-	(613 971,0)	(114 471,0)	-
			ԼՂՀ ֆինանսների նախարարություն	-	(613 971,0)	(114 471,0)	-
04			ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	64 971,0	48 971,0	-
	7		Այլ բնագավառներ	-	64 971,0	48 971,0	-
		2	Հյուրանոցներ և հասարակական սննդի օբյեկտներ	-	64 971,0	48 971,0	-
		01	Պատվիրակությունների ընդունելություններ	-	64 971,0	48 971,0	-
			ԼՂՀ կառավարության աշխատակազմ	-	64 971,0	48 971,0	-
11			ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉՂԱՍՎՈՂ ԾԱԽՍԵՐ	-	549000,0	41000,0	-
	2		Այլ ծախսեր	-	549 000,0	41 000,0	-
		1	Այլ ծրագրեր	-	549 000,0	41 000,0	-
		02	Կապիտալ ներդրումներ	-	454 000,0	-	-
			ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն	-	454 000,0	-	-
		06	Գույքի գնման ծախսեր	-	95 000,0	41 000,0	-
			ԼՂՀ կառավարություն	-	95 000,0	41 000,0	-

ԼԵՌՆԱՑԻՆ ԴԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

28 հունիսի 2017թ.

N 473-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի N 743-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ոքոշում է**:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի նոյեմբերի 24-ի «2017 թվականի համար բնափայտի մթերման տարեկան հաշվարկային հատատեղը հաստատելու մասին» N 743-Ն որոշմամբ հաստատված հավելվածի աղյուսակում 1-ին և «Ընդամենը» տողերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

1	Անտառ-վերականգնման հատում	41400	11400	2000	5600	250	500	3000	50	30000
	Ընդամենը	162700	12 700	2 300	6 000	300	600	3 450	50	150 000

»:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

29 հունիսի 2017թ.

N 475-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 27-ի N 350 որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Ասկերանի քաղաքային համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,03 հեկտար արտադրայրը փոխադրել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

3 հուլիսի 2017թ.

N 481-Ն

ք. Ստեփանակերտ

«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՊԱՐՏԱԴԻՐ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «Դ» ՍԵՐԻԱՅԻ ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԸ
ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9.5-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ռ ր ղ ու մ է**:

1. «Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմավորման համար 2017 թվականի հուլիսի 1-ից կիրառության մեջ դնել «Դ» սերիայի դրոշմապիտակները:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի հուլիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

5 հուլիսի 2017թ.

N 489-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **առ ոչ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 4-ի N 152 որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հաղբութի շրջանի Թաղասեռի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,1184 հեկտար արոտավայրը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

5 հուլիսի 2017թ.

N 490-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ռ ւ մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 4-ի N 140 որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հաղբուրթի շրջանի Մեծ Թաղերի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,111893 հեկտար արոտավայրը և պետական սեփականություն հանդիսացող անտառային նպատակային նշանակության 0,11993 հեկտար թփուտը փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության՝ էներգետիկայի օբյեկտների հողերի:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

5 հուլիսի 2017թ.

N 491-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ա ղ ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 4-ի N 153 որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հաղրութի շրջանի Տումիի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող անտառային նպատակային նշանակության 0,04495 հեկտար անտառը փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության՝ էներգետիկայի օբյեկտների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

10 հուլիսի 2017թ.

N 496-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 966-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***ն ր ո շ ու մ է***

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 30-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ձեռքբերվելիք տոհմային ցուլերի արժեքի մասնակի սուբսիդավորման կարգը հաստատելու մասին» N 966-Ն որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ գործողությունը տարածվում է 2017 թվականի մայիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2017 թվականի հուլիսի 10-ի N 496-Ն որոշման

«Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարության 2014 թվականի
դեկտեմբերի 30-ի N 966-Ն որոշման

ԿԱՐԳ

ԼԵՈՒՍՅՒՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՁԵՈՔԲԵՐՎԵԼԻՔ ՏՈՀՄԱՅԻՆ ՑՈՒԼԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Մույն կարգով կանոնակարգվում են տեղական նախրի բարելավման և մթերատվության բարձրացման նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ձեռքբերվելիք տոհմային ցուլերի արժեքի մասնակի սուբսիդավորմանն ուղղված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Մույն կարգի իմաստով օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) **հայտատու**՝ տոհմային ցուլ(եր) ձեռք բերելու նպատակով համայնքը սպասարկող անասնաբույժներին դիմած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր:

2) **տոհմային ցուլ**՝ փաստաթղթով ծագումը վավերացված, վերարտադրության համար օգտագործվող և սահմանված կարգով գրանցված խոշոր եղջերավոր կենդանիների ջերսեյ, ֆլեկվի, շվից և այլ ցեղատեսակների բարձրարժեք արու առանձնյակ, ընդ որում ջերսեյ ցեղատեսակինը՝ ոչ պակաս, քան 230 կիլոգրամ, ֆլեկվի, շվից և այլ ցեղատեսակինը՝ ոչ պակաս, քան 280 կիլոգրամ կենդանի քաշով:

3) **տոհմային ցուլերի արժեքի մասնակի սուբսիդավորում**՝ տոհմային ցուլերի արժեքի մասնակի փոխհատուցում:

4) **տոհմային ցուլի արժեք**՝ տոհմային ցուլի կենդանի քաշի 97 տոկոսը (3 տոկոսը չի հաշվարկվում՝ հաշվի առնելով կենդանու աղեստամոքսային ուղու պարունակությունը) բազմապատկած շուկայական գնով:

5) **փակ պահվածք**՝ անասնապահական մթերքների արտադրության շահավետ կազմակերպման, արտադրության ծավալի ավելացման, կենդանիների մթերատվության բարձրացման, նրանց անկորուստ վերարտադրությունն ապահովելու նպատակով խոշոր եղջերավոր կենդանին ամբողջ տարվա ընթացքում անասնաշենքերում և կից մեկուսացված տարածքում պահելը՝ բացառելով կենդանու տեղափոխումը հեռավոր արոտներ:

II. ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) համակարգում և վերահսկողություն է իրականացնում միջոցառման իրականացման գործընթացի նկատմամբ:

4. Հայտատուները նախարարության կողմից նշված ժամկետում տվյալ համայնքը սպասարկող անասնաբույժներին են ներկայացնում հայտ՝ համաձայն N 1 ձևի՝ նշելով գործունեության իրականացման վայրի, պայմանների ու տոհմային ցուլերի պահանջարկի մասին տեղեկությունները:

5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անասնաբուժական սպասարկման կայանները (այսուհետ՝ կայաններ), համայնքային անասնաբույժներին ներկայացրած հայտերի հիման վրա՝ նախարարության կողմից սահմանված ժամկետում նախարարություն են ներկայացնում տեղեկություններ՝ համաձայն N 2 ձևի՝ նշելով գործունեության վայրը (համայնքը, գյուղը), հայտատուների տվյալները (անունը, ազգանունը, հայրանունը, անվանումը, անձնագրային տվյալները, հեռախոսահամարը), տնօրինող գլխաքանակը և ձեռքբերման ենթակա տոհմային ցուլի ցեղը և քանակը:

6. Մասնակի սուբսիդավորման ենթակա է ձեռքբերվելիք տոհմային ցուլի արժեքի 35 տոկոսը: Տոհմային ցուլի արժեքի 22,75 տոկոսը իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից վճարվում է որպես կանխավճար, իսկ մնացած 42,25 տոկոսը տրամադրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) միջոցով, անտոկոս փոխառության տեսքով, երեք տարի մարման ժամկետով և տոհմային ցուլը երեք տարի փակ պահվածքով պարտադիր պահելու պայմանով: Իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից կանխավճարն վճարվում է հիմնադրամին՝ անտոկոս փոխառության պայմանագրերը կնքելու պահին:

Տոհմային ցուլը փակ պահվածքով երեք տարի չպահելու կամ անփույթ պահելու հետևանքով տոհմային ցուլի անկման դեպքում իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից տոհմային ցուլի չսուբսիդավորված արժեքը՝ հաշվանցած մինչև անկումը մարված փոխառության գումարը, ենթակա է վերադարձման պետական բյուջե անկումը հայտնաբերելուց երեք ամսվա ընթացքում:

Տոհմային ցուլի հարկադիր սպանողը կամ հիվանդության պատճառով խոտանումը պետք է հիմնավորված լինի համայնքը սպասարկող անասնաբույժի ակտով:

7. Նախարարությունը, սույն կարգի 5-րդ կետում նշված տեղեկությունները ստանալուց հետո տասնօրյա ժամկետում ընդհանրացնում և դրանց հիման վրա հիմնադրամ է ներկայացնում տեղեկություններ՝ տոհմային ցուլերի ձեռքբերման պահանջարկի մասին:

8. Հիմնադրամը՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում տոհմային ցուլերի անասնաբուծություն իրականացնող ընկերությունների հետ կնքում է տոհմային ցուլերի ձեռքբերման պայմանագրեր:

2) հիմք ընդունելով սույն կարգի 7-րդ կետում նշված տեղեկությունները՝ հայտատուների հետ կնքում է տոհմային ցուլերի ձեռքբերման համար անտոկոս փոխառության պայմանագրեր՝ նախատեսելով սույն կարգի 6-րդ կետից բխող պայմանների կատարումը սահմանող դրույթներ:

3) յուրաքանչյուր խմբաքանակի տրամադրումից հետո, տասնօրյա ժամկետում նախարարություն է ներկայացնում տեղեկություններ տոհմային ցուլերի ձեռքբերման և անտոկոս փոխառությունների տրամադրման ուղղությամբ կատարած աշխատանքների մասին:

9. Նախարարությունը՝ հիմք ընդունելով սույն կարգի 8-րդ կետի 3-րդ ենթակետում նշված տեղեկությունները, իրականացնում է սույն կարգի 6-րդ կետում նշված սուբսիդավորումը՝ հիմնադրամին տրամադրելով անհրաժեշտ ֆինանսական միջոցներ յուրաքանչյուր տարվա պետական բյուջեում նախատեսված համապատասխան միջոցներից:

10. Գործունեության իրականացման վայրի փոփոխության դեպքում հայտատուները պարտավոր են գրավոր տեղեկացնել համայնքը սպասարկող անասնաբույժներին, իսկ համայնքը սպասարկող անասնաբույժները՝ կայաններին:

11. Կայանները՝ յուրաքանչյուր ամիս, մինչև տվյալ ամսվանը հաջորդող ամսվա տասը, նախարարություն են ներկայացնում տեղեկություններ՝ անասնաբուծության զարգացման և մթերատվության բարձրացման նպատակով տրամադրված տոհմային ցուլերի և ստացված խառնածինների մասին՝ համաձայն N 3 ձևի:

**III. ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ
ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

12. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ձեռքբերվելիք տոհմային ցուլերի արժեքի մասնակի սուբսիդավորման գործընթացի իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝

- 1) կենդանիների մթերատվության մակարդակի բարձրացում.
- 2) բարելավված և տոհմային բարձր մթերատու հատկանիշներով օժտված տնտեսությունների ցանցի ձևավորում.
- 3) անասնաբուծության վարման ինտենսիվ տեխնոլոգիաների ներդրման հնարավորություն.
- 4) գյուղական վայրերում վերամշակման նոր ձեռնարկությունների ստեղծման համար նպաստավոր պայմանների ապահովում.
- 5) անասնաբուծության մասնագիտացման շնորհիվ բնական կերահանդակների առավել արդյունավետ օգտագործում.
- 6) գյուղական վայրերում նոր աշխատատեղերի ստեղծում.
- 7) անասնաբուծական մթերքների ինքնաբավության մակարդակի բարձրացում:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հ Ա Յ Տ

Դիմող _____
(Ֆիզիկական կամ իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր)

Բնակության վայրը (գտնվելու վայրը),
հեռախոսահամարը _____
Անձնագրի և հանրային ծառայությունների համարանիշի կամ սոցիալական քարտի
համարը _____
Գործունեության իրականացման վայրը _____
Դիմում եմ Ձեզ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ձեռքբերվելիք տոհմային
ցուլերի արժեքի մասնակի սուբսիդավորման կարգի համաձայն _____
(տոհմային ցուլի ցեղը և քանակը)

ձեռք բերելու նպատակով:

Հայտին կից ներկայացվում են՝

1. _____
2. _____
3. _____
4. _____
5. _____
6. _____

(անուն, ազգանուն (անվանում))

(ստորագրությունը)

Կ.Տ.

« ____ » _____ 20 ____ թ.

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼՂՀ _____ շրջանում անասնաբուծության զարգացման և մթերատվության բարձրացման նպատակով տոհմային ցուլեր ձեռքբերելու համար դիմած հայտատուների մասին

Հ/Հ	Հայտատուի Ա.Ա.Հ. (անվանումը)	Գործունեության վայրը՝ համայնք, գյուղ	Անձնագրային տվյալները	Հեռախոսահամարը	Տնօրինվող խ.ե.կ. քանակը (գլուխ)	որից՝ կով, երինջ (գլուխ)	Անհրաժեշտ Տոհմային և ցուլերի քանակը (գլուխ)	Ծանոթություն

Անասնաբուժական սպասարկման կայանի տնօրեն՝ _____

Ա.Ա.Հ.

Կ.Տ.

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼՂՀ _____ շրջանում անասնաբուծության զարգացման և մթերատվության բարձրացման նպատակով տրամադրված տոհմային ցուլերի և ստացված խառնածինների մասին

Հ/Հ	Հայտատուի Ա.Ա.Հ. (անվանումը)	Գործունեության վայրը՝ համայնք, գյուղ	Հեռախոս	Տրամադրված տոհմային ցուլի համարը և ցեղը	Տրամադրման ամիս, ամսաթիվ	Տվյալ ցուլից ծնված խառնածինների քանակը (գլուխ)	Ծանոթություն

Անասնաբուժական սպասարկման կայանի տնօրեն՝ _____
 Ա.Ա.Հ.

Կ.Տ. _____ »:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հուլիսի 2017թ.

N 513-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
26-Ի N 865-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասին, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ա ղ ղ ղ ղ ղ** է:

1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 865-Ն որոշման N 2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի հուլիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1
ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 865-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազ.դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	-	-	-	-
			այդ թվում՝				
01			ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՑԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	-	(140 000,0)	(250 000,0)
	7		Պետական պարտքի գծով գործառնություններ	-	-	(140 000,0)	(250 000,0)
		1	Պետական պարտքի գծով գործառնություններ	-	-	(140 000,0)	(250 000,0)
		01	Ներգրավված փոխառու միջոցների սպասարկման ծախսեր (տոկոսավճարներ)	-	-	(140 000,0)	(250 000,0)
			ԼՂՀ ֆինանսների նախարարություն	-	-	(140 000,0)	(250 000,0)
10			ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	-	-	(360 000,0)	(600 000,0)
	2		Ծերություն	-	-	(360 000,0)	(600 000,0)
		1	Ծերություն	-	-	(360 000,0)	(600 000,0)
		06	Աշխատանքային կենսաթոշակներ	-	-	(360 000,0)	(600 000,0)
			ԼՂՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	-	-	(360 000,0)	(600 000,0)
11			ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉՂԱՍՎՈՂ ԾԱԽՍԵՐ	-	-	500 000,0	850 000,0
	2		Այլ ծախսեր	-	-	500 000,0	850 000,0
		1	Այլ ծրագրեր	-	-	500 000,0	850 000,0
		02	Կապիտալ ներդրումներ	-	-	500 000,0	850 000,0
			ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն			350 000,0	632 973,0
			ԼՂՀ պաշտպանության նախարարություն	-	-	150 000,0	217 027,0

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

դրամ, 157.626,63 ՀՀ դրամ, 301.821,91 ՀՀ դրամ և յուրաքանչյուր պահանջով տույժ գանձելու մասին:

Առաջին ատյանի դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի և դեկտեմբերի 28-ի որոշումներով նշված հայցերով հարուցված քաղաքացիական գործերը միացվել են մեկ վարույթում:

Առաջին ատյանի դատարանի 2017 թվականի փետրվարի 2-ի վճռով /դատավոր Ա.Թադևոսյան/ հայցերը բավարարվել են մասնակիորեն. Ռևիկ Հայրապետյանից հոգուտ ԼՂՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի գանձվել է 946.500 ՀՀ դրամ՝ որպես 2014 թվականի հոկտեմբերի 8-ին կնքված համաձայնագրից առաջացած պարտավորության գումար, և վճարված պետական տուրքի դիմաց 18.930 ՀՀ դրամ:

ԼՂՀ վերաքննիչ դատարանը /այսուհետ՝ Վերաքննիչ դատարան/ 2017 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ մերժել է Առաջին ատյանի դատարանի վճռի դեմ բերված Հիմնադրամի վերաքննիչ բողոքը և վճիռը թողել օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի որոշման դեմ 2017 թվականի մայիսի 11-ին վճռաբեկ բողոք է բերել հայցվոր ԼՂՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամը:

Վճռաբեկ բողոքը և քաղաքացիական գործը Գերագույն դատարանի դատական կազմին է հանձնվել 2017 թվականի մայիսի 15-ին:

Գերագույն դատարանի 2017 թվականի մայիսի 25-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը բերվել է նյութական իրավունքի խախտման հիմքով:

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

Վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է նյութական իրավունքի նորմերի խախտմամբ. Վերաքննիչ դատարանի հետևությունները հակասում են ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ, 345-րդ, 347-րդ, 447-րդ, 466-րդ, 468-րդ և 469-րդ հոդվածների պահանջներին:

Մեջբերելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, 447-րդ հոդվածի բովանդակությունը, բողոքաբերը նշել է, որ Հիմնադրամի և Պատասխանողի միջև կնքված համաձայնագրի տառացի մեկնաբանությունից հետևում է, որ համաձայնագիրն ուղղակիորեն ոչ մի պայման չի պարունակում Պատասխանողի պարտավորությունները նորացնելու վերաբերյալ, մինչդեռ Վերաքննիչ դատարանը հանգել է այն եզրակացության, որ Պատասխանողի պարտավորությունը նորացվել է հենց փոխառության պարտավորությամբ: Ըստ բողոքի՝ համաձայնագրի ընդհանուր բովանդակությունից հստակ երևում է, որ Պատասխանողի՝ տարբեր պայմանագրերից ծագած պարտավորությունները չեն միացվել մեկ պարտավորության մեջ: Մասնավորապես՝ համաձայնագրի 1-ին կետում նշված է, որ պարտավորությունները սահմանված են համաձայն կից հավելվածի, իսկ կից հավելվածում առանձին-առանձին նշված են յուրաքանչյուր պայմանագրի գծով տոկոսների և տույժերի չափերը: Բողոքաբերի կարծիքով, նշվածն արդեն իսկ հիմք է պնդելու, որ տարբեր պայմանագրերից ծագած պարտավորությունները չեն միացվել մեկ

պարտավորության մեջ: Համաձայնագրի 2-րդ կետով սահմանվում է, որ «համաձայնագրով պարտավորությունների կատարման ժամկետը համարվում է երկարաձգված՝ ժամկետանց պարտավորությունների համար՝ համաձայնագիրը կնքելու պահից սկսած, մնացած պարտավորությունների համար՝ պայմանագրով սահմանված մարման ժամկետը լրանալու օրվանից սկսած»: Այսինքն՝ նույնիսկ համաձայնագրով յուրաքանչյուր պայմանագրի գծով առաջացած պարտավորությունների համար սահմանվել են պարտավորությունների մարման տարբեր վերջնաժամկետներ: Եթե նույնիսկ ընդունենք, որ համաձայնագրի տառացի մեկնաբանությունը կարող է ինչ-որ կերպ թույլ տալ եզրակացնելու, որ տեղի է ունեցել պարտավորությունների միացում և սահմանվել է պարտավորության այլ առարկա, քանի որ Պատասխանողի՝ Հիմնադրամի հանդեպ ունեցած տարբեր պայմանագրերի շրջանակներում առաջացած պարտավորությունները նշվել են ընդհանուր մեկ թվով, ապա այս պարագայում պետք է հաշվի առնվեր նաև կողմերի դրսևորած իրական կամքը: Պատասխանողը պարտավորությունը նորացնելու վերաբերյալ ոչ մի ցուցմունք չի տվել և տույժերի ու տոկոսների վերաբերյալ առարկություններ չի ներկայացրել:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն եզրահանգմանը, որ համաձայնագրով սահմանվել է պարտավորության կատարման այլ եղանակ՝ մեկ տարվա ժամկետ, ապա պարտավորության կատարման ժամկետը հանդիսանում է պարտավորության կատարման պայման, այլ ոչ թե եղանակ: Պարտավորությունների կատարման եղանակները հստակ սահմանված են քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածում:

Բողոքաբերը, մեջբերելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի բովանդակությունը, նշել է, որ պարտավորությունների կատարման պայմաններն են պարտավորության կատարման ժամկետը, վայրը և այլն:

Ըստ բողոքի՝ քաղաքացիական օրենսդրությունը նախատեսում է, կողմերի փոխադարձ համաձայնությամբ, պայմանագրում առանձին պայմանների փոփոխության հնարավորություն /քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մաս, 468-րդ հոդվածի 1-ին մաս, 469-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը/: Սակայն և՛ Առաջին աստյանի դատարանը, և՛ Վերաքննիչ դատարանն անտեսել են պարտավորությունների առանձին պայմանների փոփոխության հնարավորությունը և Հիմնադրամի ու Պատասխանողի միջև կնքված համաձայնագիրը դիտարկել են որպես պարտավորությունների նորացման վերաբերյալ համաձայնություն:

Բողոքաբերը, վճռաբեկ բողոքին կցելով թիվ ԸԻԴ 2279/02/15, 0286/02/17, 0289/02/17 քաղաքացիական գործերով Առաջին աստյանի դատարանի վճիռները, նշել է, որ նմանատիպ գործերով լրիվությամբ բավարարվել են Հիմնադրամի կողմից ներկայացված հայցերը: Բողոքաբերի կարծիքով, նույնանման գործերով իրար հակասող վճիռների կայացումը խառնաշփոթ է առաջացնում քաղաքացիական օրենսգրքի՝ պարտավորությունների նորացման և պայմանագիրը փոփոխելու վերաբերյալ նորմերի և գործարքների պայմանների մեկնաբանման հարցում:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը բողոքաբերը հիմնավորել է նրանով, որ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2017 թվականի ապրիլի 11-ի որոշումը, այն փոփոխել և հայցը բավարարել ամբողջությամբ, ինչպես նաև անդրադառնալ դատական ծախսերի բաշխման հարցին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Հիմնադրամի և Պատասխանողի /այսուհետ նաև՝ Կողմեր/ միջև 2009թ. նոյեմբերի 19-ին կնքվել է թիվ 64 նպատակային գույքային փոխառության պայմանագիրը, ըստ որի՝ Հիմնադրամը Պատասխանողին հանձնել է 4.500 կգ գարի (որի 1-կգ-ի գինը կազմել է 100 ՀՀ դրամ), իսկ վերջինս պարտավորվել է մինչև 2010 թվականի օգոստոսի 1-ը Հիմնադրամին վճարել ապրանքի գինը՝ 450.000 ՀՀ դրամ: Սահմանված ժամկետում Պատասխանողը պարտավորությունը չի կատարել, ուստի, Կողմերի միջև 2010թ. հոկտեմբերի 23-ին կնքվել է համաձայնագիր, որով Պատասխանողը պարտավորվել է 450.000 ՀՀ դրամ պարտքը Հիմնադրամին վերադարձնել երեք տարվա ընթացքում՝ հավասար 150.000-ական ՀՀ դրամ չափերով, մինչև յուրաքանչյուր հաջորդ տարվա օգոստոսի 1-ը սահմանված ժամկետներում: Նշված ժամկետներում Պատասխանողը պարտավորությունը ոչ պատշաճ է կատարել՝ վճարել է 300.000 ՀՀ դրամ փոխառության գումարը (գ.թ. 50-51):

2. Կողմերի միջև 2010 թվականի հոկտեմբերի 18-ին կնքվել է նպատակային անտոկոս փոխառության պայմանագիր, համաձայն որի՝ Պատասխանողը պարտավորվել է «Քեթրին Գրուպ» ՍՊ ընկերությունից առուվաճառքի պայմանագրով ձեռք բերված 2.000 կգ ամոֆոսի դիմաց Հիմնադրամի կողմից իր փոխարեն վճարված 400.000 ՀՀ դրամից 200.000 ՀՀ դրամը Հիմնադրամին վերադարձնել մինչև 2011 թվականի հոկտեմբերի 18-ը, իսկ մյուս 200.000 ՀՀ դրամը՝ մինչև 2012 թվականի հոկտեմբերի 18-ը: Պատասխանողը ոչ պատշաճ է կատարել պարտավորությունը. 2011 թվականի դեկտեմբերի 14-ին վճարել է 225.500 ՀՀ դրամ, որից 200.000 ՀՀ դրամն ուղղվել է փոխառության պարտավորության, 25.500 ՀՀ դրամը՝ տույժի մարմանը, իսկ 2014 թվականի հոկտեմբերի 8-ին վճարել է 10.000 ՀՀ դրամ տույժը (գ.թ. 8):

3. Կողմերի միջև 2013 թվականի նոյեմբերի 27-ին կնքվել է փոխառության պայմանագիր, ըստ որի՝ Հիմնադրամը Պատասխանողին հանձնել է 266.500 ՀՀ դրամ փոխառություն՝ տարեկան 6 տոկոս տոկոսադրույքով՝ մինչև 2014 թվականի հոկտեմբերի 1-ը վերադարձնելու պայմանով: Սահմանված ժամկետում Պատասխանողը պարտավորությունը չի կատարել (գ.թ. 137):

4. Կողմերի միջև 2014 թվականի ապրիլի 17-ին կնքվել է առուվաճառքի պայմանագիր, ըստ որի՝ Հիմնադրամը Պատասխանողին հանձնել է 20լ 2.4 D դիամինային աղ տեսակի հերբեցիդ, իսկ վերջինս պարտավորվել է ապրանքի գինը՝ 90.000 ՀՀ դրամը, Հիմնադրամին վճարել մինչև 2014 թվականի սեպտեմբերի 1-ը: Նույն օրը Կողմերի միջև ձևակերպված փոխառության պայմանագրով առուվաճառքի պայմանագրից ծագած 90.000 ՀՀ դրամ պարտավորությունը փոխարինվել է փոխառության պարտավորությամբ, որով Պատասխանողը պարտավորվել է 90.000 ՀՀ դրամը՝ տարեկան 6 տոկոս տոկոսադրույքով, Հիմնադրամին վճարել մինչև 2014 թվականի սեպտեմբերի

1-ը: Սահմանված ժամկետում Պատասխանողը պարտավորությունը չի կատարել (գ.թ. 73-74):

5. Կողմերի միջև 2014 թվականի ապրիլի 17-ին կնքվել է առուվաճառքի պայմանագիր, ըստ որի՝ Հիմնադրամը Պատասխանողին հանձնել է 75 կգ «Յարա Կրիստալոն 18-18-18+3» տեսակի տերևային սնուցիչ, իսկ վերջինս պարտավորվել է մինչև 2014 թվականի սեպտեմբերի 1-ը Հիմնադրամին վճարել ապրանքի գինը՝ 100.500 ՀՀ դրամը: Նույն օրը Կողմերի միջև ձևակերպված փոխառության պայմանագրով՝ առուվաճառքի պայմանագրից ծագած 100.500 ՀՀ դրամ պարտավորությունը փոխարինվել է փոխառության պարտավորությամբ, որով Պատասխանողը պարտավորվել է 100.500 ՀՀ դրամը՝ տարեկան 6 տոկոս տոկոսադրույքով, Հիմնադրամին վճարել մինչև 2014 թվականի սեպտեմբերի 1-ը: Սահմանված ժամկետում Պատասխանողը պարտավորությունը չի կատարել (գ.թ. 94-95):

6. Կողմերի միջև 2014 թվականի ապրիլի 17-ին կնքվել է առուվաճառքի պայմանագիր, ըստ որի՝ Հիմնադրամը Պատասխանողին հանձնել է 15,5 լ «Պուրա Սուպեր» տեսակի հերբեցիդ, իսկ վերջինս պարտավորվել է մինչև 2014 թվականի սեպտեմբերի 1-ը Հիմնադրամին վճարել ապրանքի գինը՝ 139.500 ՀՀ դրամը: Նույն օրը Կողմերի միջև ձևակերպված փոխառության պայմանագրով առուվաճառքի պայմանագրից ծագած 139.500 ՀՀ դրամ պարտավորությունը փոխարինվել է փոխառության պարտավորությամբ, որով Պատասխանողը պարտավորվել է 139.500 ՀՀ դրամը՝ տարեկան 6 տոկոս տոկոսադրույքով, Հիմնադրամին վճարել մինչև 2014 թվականի սեպտեմբերի 1-ը: Սահմանված ժամկետում Պատասխանողը պարտավորությունը չի կատարել (գ.թ. 115-116):

7. Կողմերի միջև 2014 թվականի հոկտեմբերի 8-ին կնքվել է համաձայնագիր, որով նրանց միջև կնքված վեց պայմանագրերից առաջացած պարտավորությունները փոխարինվել են /միացվել են/ նույն օրվա դրությամբ հաշվարկված ընդհանուր 946.500 ՀՀ դրամ պարտավորությամբ, որի կատարման համար սահմանվել է մեկ տարվա ժամկետ: Տուժանքի մասին պայման համաձայնագրով չի սահմանվել (գ.թ. 11):

8. Համաձայնագրով սահմանված ժամկետում Պատասխանողը պարտավորությունը չի կատարել:

9. Բողոքաբերը վիճարկում է Հայցվորի և Պատասխանողի միջև նախկինում կնքված պայմանագրերը 2014 թվականի հոկտեմբերի 8-ի համաձայնագրով նորացվելու և սկզբնական պարտավորությունները դադարելու մասին ստորադաս դատարանների դիրքորոշումները:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Գերագույն դատարանն արձանագրում է, որ վճարել բողոքը վարույթ ընդունելը և բողոքարկված դատական ակտը վճարելիության կարգով վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից: Գերագույն դատարանը պետք է պարզաբանի բողոքում բարձրացված հետևյալ իրավական հարցերը. 1/ ինչպե՞ս պետք է տարանջատել պարտքի նորացման և պայմանագրի փոփոխության վերաբերյալ համաձայնագրերը, 2/ ո՞րն է պայմանագրի առարկան և պայմանագրի կատարման

եղանակը, 3/ վեճը լուծելիս կարևորությունը տրվում է կնքված գործարքի բովանդակությանը, թե՛ կողմերի դրսևորած իրական կամքին:

Գերագույն դատարանը, վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելով Վերաքննիչ դատարանի որոշումը, գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է մերժել և որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

2. Քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:...»:

Իրավահարաբերությունների ծագման պահին և ներկայումս գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 430-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ պարտավորությունը դադարում է կողմերի միջև գոյություն ունեցող սկզբնական պարտավորությունը նույն անձանց միջև մեկ այլ պարտավորությամբ փոխարինելու մասին համաձայնությամբ, որը նախատեսում է դրա այլ առարկա կամ կատարման այլ եղանակ /նորացում/: Նորացումը դադարեցնում է սկզբնական պարտավորության հետ կապված լրացուցիչ պարտավորությունները, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի փոփոխումը և լուծումը հնարավոր է կողմերի համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Իսկ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 468-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի փոփոխման կամ լուծման համաձայնությունը կնքվում է այն ձևով, ինչով պայմանագիրը, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պայմանագրից կամ գործարար շրջանառության սովորույթներից: Իսկ նույն օրենսգրքի 469-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ պայմանագիրը փոփոխելիս կողմերի պարտավորությունները պահպանվում են ըստ փոփոխված պայմանագրի:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Պայմանագրի մեկնաբանումը» վերտառությամբ 447-րդ հոդվածի համաձայն՝ «1. Պայմանագրի պայմանները մեկնաբանելիս դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Պայմանագրի պայմանի տառացի նշանակությունը պարզ չլինելու դեպքում այն սահմանվում է պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով: 2. Եթե սույն հոդվածի 1-ին մասում պարունակվող կանոնները հնարավորություն չեն տալիս որոշել պայմանագրի բովանդակությունը, ապա պետք է պարզվի կողմերի իրական ընդհանուր կամքը՝ հաշվի

առնելով պայմանագրի նպատակը: Ընդ որում, նկատի են առնվում բոլոր համապատասխան հանգամանքները՝ ներառյալ պայմանագրին նախորդող բանակցությունները և թղթակցությունը, կողմերի փոխադարձ հարաբերություններում հաստատված գործելակերպը, գործարար շրջանառության սովորույթները, կողմերի հետագա վարքը:»:

Վերը նշված իրավական նորմերի վերլուծության արդյունքում Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ քաղաքացիական իրավահարաբերություններն այլ իրավահարաբերություններից տարբերվում են նախ և առաջ նրանով, որ /որպես կանոն/ կամային հարաբերություններ են: Այդ հարաբերությունների ձևավորման համար առավել կարևոր է մասնակիցների ազատ կամահայտնությունը, և եթե քաղաքացիական իրավահարաբերությունում իրավագոր կողմն իրավասու է պարտավոր անձից պահանջել որոշակի վարքագծի դրսևորում, ապա միայն նրանց միջև գոյություն ունեցող պայմանագրի ուժով կամ օրենքի պահանջով:

Քաղաքացիական իրավական պարտավորությունների կատարման սկզբունքներից բխում է, որ կողմերի միջև կնքված պայմանագրերը պետք է կատարվեն այն պայմաններով, որոնցով կնքվել են: Մակայն այս ընդհանուր կանոնից նախատեսվում են բացառություններ այնպիսի իրավիճակների համար, երբ առաջանում է կնքված պայմանագիրը փոփոխելու կամ լուծելու անհրաժեշտություն կամ սկզբնական պարտավորությունը դադարում է նորացմամբ:

Գերագույն դատարանը փաստում է, որ օրենսդիրը կողմերին իրավունք է վերապահում փոխադարձ համաձայնությամբ փոփոխել պայմանագիրը /քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդված/, իսկ օրենսգրքի 468-րդ հոդվածը սահմանում է, որ պայմանագրի փոփոխման /կամ լուծման/ համաձայնությունը կնքվում է այն ձևով, ինչ ձևով որ կնքվել է պայմանագիրը:

Պայմանագիրը փոփոխվելու դեպքում կողմերի պարտավորությունները պահպանվում են ըստ փոփոխված պայմանագրի: Պայմանագրի փոփոխման դեպքում թույլատրվում է միայն փոփոխել պայմանագրի կոնկրետ տարրերը, այլ ոչ թե պարտավորության տեսակը: Այլ պարտավորության անցնելը ենթադրում է սկզբնական պարտավորության նորացում:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 430-րդ հոդվածը սահմանում է «նորացում» հասկացության իրավական բնորոշումը և դիտում է նորացումն որպես պարտավորության դադարման հիմքերից մեկը: Նորացման ժամանակ պարտավորության սուբյեկտների կազմը պահպանվում է, սակայն սկզբնական պարտավորությունը դադարում է և դրա տեղը ծագում է նոր պարտավորություն: Եթե խոսքը գնում է սկզբնական պարտավորության առանձին տարրերի փոփոխման մասին /ինչը տեղի է ունենում պայմանագրի փոփոխման դեպքում/, ապա դա պարտավորության նորացում չէ:

Պետք է նկատի ունենալ, որ նորացման մասին համաձայնությունը գործարք է, հետևաբար դրա նկատմամբ ամբողջ ծավալով կիրառվում են գործարքի ձևին վերաբերող քաղաքացիական օրենսգրքով սահմանված կանոնները: Նորացումը ենթադրում է, որ այն պարտավորությունը, որով փոխարինվում է հինը, պետք է ունենա այլ առարկա կամ առարկան կարող է չտարբերվել սկզբնական պարտավորության առարկայից, սակայն փոփոխվի դա կատարման եղանակը: Նորացումը ձևակերպվում է համաձայնության ձևով, այլ ոչ թե նոր պայմանագիր կնքելով: Հետևաբար, որպեսզի կողմերի

միջև շարունակեն գործել սկզբնական պարտավորությամբ սահմանված տուժանքի /կամ դրամական պարտավորությունը չկատարելու համար պատասխանատվության/ միջոցները, դրանք պետք է կրկին սահմանվեն նորացված պարտավորության մեջ /համաձայնագրում/:

Այսպիսով, Գերագույն դատարանը, ամփոփելով վերոնշյալը, արձանագրում է, որ պարտավորության նորացումը կողմերի համաձայնությամբ պարտավորությունը դադարեցնելու հատուկ տեսակ է: Նորացման դեպքում կողմերի միջև գոյություն ունեցող սկզբնական պարտավորությունը դադարում է նույն անձանց միջև մեկ այլ պարտավորությամբ փոխարինվելու մասին համաձայնությամբ: Հետևաբար, նորացման անհրաժեշտ պայման է հանդիսանում նոր պարտավորության միջոցով նախկին պարտավորությունը դադարեցնելու ցանկությունը:

Ինչպես հետևում է գործի նյութերից, ԼՂՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի և պատասխանող Ռ.Հայրապետյանի միջև 2014 թվականի հոկտեմբերի 8-ին ձևակերպված գրավոր համաձայնությամբ /պարտավորությունների կատարման ժամկետը երկարաձգելու մասին համաձայնագիր/ նրանց միջև կնքված վեց պայմանագրերից առաջացած սկզբնական պարտավորությունները փոխարինվել են /միացվել են/ նույն օրվա դրությամբ հաշվարկված ընդհանուր 946.500 ՀՀ դրամ պարտավորությամբ, որի կատարման համար սահմանվել է մեկ տարվա ժամկետ:

Համաձայն վճռաբեկ բողոքի, բողոքաբերը վիճարկում է միայն 2014 թվականի հոկտեմբերի 8-ին կողմերի միջև կնքված համաձայնագրով Պատասխանողի պարտավորությունները նորացվելու և համաձայնագրում տույժերի վերաբերյալ պայման չսահմանելու մասին ստորադաս դատարանների հետևությունները, գտնելով, որ Պատասխանողի պարտավորություններն ոչ թե նորացվել են, այլ դրանց կատարումը երկարաձգվել է մեկ տարի ժամկետով և համաձայնագրի բովանդակությունից երևում է, որ Պատասխանողի տարբեր պայմանագրերից ծագած պարտավորությունները չեն միացվել մեկ պարտավորության մեջ:

Գերագույն դատարանն անհիմն է համարում բողոքաբերի վերը նշված պնդումը, քանի որ ինչպես հետևում է կողմերի միջև 8.10.2014թ. կնքված համաձայնագրից՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ տեղի է ունեցել մի քանի պայմանագրերից ծագած պարտավորությունների միացում, որի չափն համաձայնագրում արտացոլվել է ընդհանուր մեկ թվով՝ 946.500 ՀՀ դրամ, և սովյալ դեպքում այդքան կարևոր չէ համաձայնագրի անվանումը /նորացում, թե պայմանագրի փոփոխում/, ինչքան կարևոր է դրա բովանդակությունը և այն, թե ինչպես են կողմերի կողմից ընկալվում համաձայնագրի պայմանները: Այդ կապակցությամբ անդրադառնալով վճռաբեկ բողոքի փաստարկին այն մասին, որ Պատասխանողը պարտավորությունները նորացնելու վերաբերյալ ոչ մի ցուցմունք չի տվել և տույժերի ու տոկոսների վերաբերյալ առարկություններ չի ներկայացրել, Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ինչպես հետևում է Առաջին ատյանի դատարանի 24.01.2017թ. դատական նիստի արձանագրությունից, պատասխանող Ռ.Հայրապետյանը դատարանում ցուցմունք է տվել այն մասին, որ «2014թ. հոկտեմբերի 8-ին հիմնադրամի հետ կնքել եմ համաձայնագիր, որով բոլոր պայմանագրերից բխող պարտավորությունների ընդհանուր 946.500 ՀՀ դրամ գումարը պարտավորվել եմ մեկ տարվա

Ժամկետում վճարել հիմնադրամին: Նշված համաձայնագրով տուժանք վճարելու պայման չի սահմանվել»: Դատական նիստի արձանագրությունից հետևում է նաև, որ Հայցվորի ներկայացուցիչը ևս փաստել է, որ համաձայնագրում միայն 946.500 ՀՀ դրամ գումարի մասին է նշված, տույժերի մասին պայման առկա չէ /հատոր 1-ին գ.թ. 33 /հակ.կողմ//:

Այսինքն, Պատասխանողի համար գործում է կողմերի միջև ձևակերպված վերջին փաստաթղթում /8.10.2014թ./ ամրագրված պարտքի վճարման պարտավորությունը: Ուստի ստորադաս դատարանները, հաշվի առնելով, որ առուվաճառքի և փոխառության պայմանագրերից բխող սկզբնական պարտավորությունները միացվել են մեկ պարտավորության մեջ և նախատեսվել դրանց կատարման այլ ժամկետ, հիմնավոր են եկել այն եզրակացության, որ 2014թ. հոկտեմբերի 8-ին կնքված համաձայնագրով տեղի է ունեցել պարտավորության նորացում, որով սկզբնական պարտավորությունները դադարել են: Իսկ հայցվոր կողմն որևէ ապացույց չի ներկայացրել նշված համաձայնագրի այլ բնույթ ունենալու մասին: Եթե Հայցվորը ցանկացել է կատարել պայմանագրերի փոփոխում, ապա դա պետք է կատարվեր ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 468-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով, այսինքն՝ համաձայնությունը պետք է կնքվեր նույն ձևով, ինչով յուրաքանչյուր պայմանագիրը:

Գերագույն դատարանի վերը նշված պատճառաբանությունները համահունչ են նաև ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի պահանջներին, համաձայն որոնց՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

Անդրադառնալով վճռաբեկ բողոքում Առաջին աստիճանի դատարանի վճիռները վկայակոչելուն, Գերագույն դատարանն արձանագրում է, որ ԼՂՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իր գործի քննության ժամանակ որպես իրավական փաստարկ իրավունք ունի մատնանշելու նույնանման փաստական հանգամանքներով մեկ այլ գործով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիմնավորումները /այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները/:

Մեկնաբանելով նշված նորմը, Գերագույն դատարանը փաստում է, որ օրենսդիրը վերը նշված «հիմնավորումները, օրենքի մեկնաբանությունները» պարտադիր չի համարել այլ գործ քննող դատարանի համար: Օրենսդիրը սահմանել է դատարանների համար միայն Գերագույն դատարանի դատական ակտերի հիմնավորումների պարտադիրությունը, այն էլ՝ բացառություն սահմանելով այն դեպքերի համար, երբ դատարանը ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ /ԼՂՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասը/:

Այսպիսով, Գերագույն դատարանը գտնում է, որ հիմքեր չկան վճռաբեկ բողոքը բավարարելու համար, քանի որ որոշում կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ չի տվել նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտում: Հետևաբար, վճռաբեկ բողոքը պետք է մերժել և որոշումը

թողնել օրինական ուժի մեջ, ինչը բխում է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներից, համաձայն որոնց՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով Գերագույն դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին, Գերագույն դատարանն արձանագրում է, որ համաձայն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Քանի որ սույն գործով վճռաբեկ բողոքը մերժվում է, դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ԼՂՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի գործադիր տնօրեն Ա.Բախշիյանի վճռաբեկ բողոքը մերժել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2017թ. ապրիլի 11-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

ստորագրություն

Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ

ստորագրություն

Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ստորագրություն

Վ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում Քաղաքացիական գործ ԸԻԴ 2039/02/16թ.
Քաղաքացիական գործ ԸԻԴ 2039/02/16թ.
Նախագահող դատավոր՝ Հ. Խաչատրյան
Դատավորներ՝ Ն. Գրիգորյան
Կ. Սաղյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք. Ստեփանակերտ 20-ին հունիսի 2017թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը /այսուհետ՝ Գերագույն դատարան/ վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր Վ. Հովսեփյանի
դատավորներ՝ Գ. Գրիգորյանի

Ա. Հայրապետյանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Ռուզաննա Մոխսեյի Խասապետյանի ընդդեմ Լեռնիդ Սուրենի Աղաջանյանի՝ 20.000 /քսան հազար/ ԱՄՆ դոլարը, հաշվեգրված 500.000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ տոկոսագումարը և 5.000 /հինգ հազար/ ԱՄՆ դոլարի նկատմամբ դատարան դիմելու օրվանից մինչև պարտավորության դադարման օրը ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի ուժով հաշվեգրվելիք տոկոսագումարը բռնագանձելու պահանջի մասին քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2017թ. ապրիլի 20-ի որոշման դեմ պատասխանողի ներկայացուցիչ Վ. Հայրապետյանի վճռաբեկ բողոքը

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան /այսուհետ՝ նաև Առաջին աստիճանի դատարան/ Ռ. Խասապետյանը /այսուհետ՝ նաև Հայցվոր/ խնդրել է բռնագանձել Լ. Աղաջանյանից /այսուհետ՝ նաև Պատասխանող/ 20.000 /քսան հազար/ ԱՄՆ դոլարը, հաշվեգրված 500.000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ տոկոսագումարը և 5.000 /հինգ հազար/ ԱՄՆ դոլարի նկատմամբ դատարան դիմելու օրվանից մինչև պարտավորության դադարման օրը ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի ուժով հաշվեգրվելիք տոկոսագումարները:

Սկզբնական հայցի դեմ Պատասխանողը ներկայացրել է հակընդդեմ հայց՝ փոխառության պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջով:

Առաջին աստանի դատարանը 2017թ. փետրվարի 3-ի վճռով սկզբնական հայցը բավարարել է մասնակիորեն՝ Լ.Աղաջանյանից հոգուտ Ռ.Խասապետյանի գանձելով 20.000 /քսան հազար/ ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ փոխառության գումար, 490.600 /չորս հարյուր ինսուն հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ՝ որպես տոկոսագումար, 199.900 /հարյուր ինսունինը հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ՝ որպես վճարված պետական տուրք, Լ.Աղաջանյանից հոգուտ Ռ.Խասապետյանի 5.000 /հինգ հազար/ ԱՄՆ դոլար ժամկետանց փոխառության գումարի չվճարված մասի նկատմամբ, սկսած 2016թ. սեպտեմբերի 1-ից մինչև պարտավորության լրիվ կատարման օրը ՀՀ ԿԲ կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքին համապատասխան հաշվարկել ու գանձել է տոկոսներ:

Լ.Աղաջանյանի հակընդդեմ հայցն ընդդեմ Ռ.Խասապետյանի՝ պայմանագիրն անվավեր ճանաչելու մասին մերժվել է:

Նշված վճռի դեմ Լ.Ղ.Ղ վերաքննիչ դատարան /այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան/ բողոք է ներկայացրել Պատասխանողի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանը՝ խնդրելով բեկանել և փոփոխել վճիռը, բավարարել հակընդդեմ հայցը, իսկ սկզբնական հայցը՝ մերժել կամ գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վերաքննիչ դատարանը 2017թ. ապրիլի 20-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ Առաջին աստանի դատարանի 2017թ. փետրվարի 3-ի վճիռը թողնելով օրինական ուժի մեջ: Պատասխանողից հոգուտ Լ.Ղ.Ղ բռնագանձել է 600 /վեց հարյուր/ ԱՄՆ դոլարին համարժեք դրամ և 14.718 /տասնչորս հազար յոթ հարյուր տասնութ/ ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի քննության համար նախատեսված պետական տուրքի գումար:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել Պատասխանողի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Հայցվորը և նրա ներկայացուցիչ Ս.Միրզոյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում, ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա: Համաձայն բողոքաբերի պնդումների՝ Վերաքննիչ դատարանը խախտել է Լ.Ղ.Ղ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ, 44-րդ, 47-րդ, 49-րդ և 113-րդ հոդվածների պահանջները, որով պայմանավորված սկզբնական հայցի մասով չի կիրառել Լ.Ղ.Ղ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 6-րդ կետի, Լ.Ղ.Ղ քաղաքացիական օրենսգրքի 882-րդ հոդվածի պահանջները, անհիմն է կիրառել Լ.Ղ.Ղ քաղաքացիական օրենսգրքի 319-րդ, 345-րդ, 347-րդ, 408-րդ, 411-րդ, 417-րդ, 448-րդ, 450-րդ, 454-րդ, 876-րդ, 877-րդ, 880-րդ, 881-րդ հոդվածները, իսկ հակընդդեմ հայցի մասով չի կիրառել Լ.Ղ.Ղ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ, 305-րդ հոդվածներն ու անվավեր չի ճանաչել փոխառության պայմանագիրն անփողության հիմքի վկայակոչմամբ, որի

համար էլ կայացված դատական ակտը չի բխում ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-123-րդ հոդվածների պահանջներից:

Ըստ բողոքաբերի՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Նշված պնդումները բողոք բերողը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

Բողոքաբերը պնդում է, որ ստորադաս դատարանները պատշաճ չեն կատարել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի պահանջները, այն է՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ պատշաճ չեն գնահատել գործում առկա ապացույցները, ինչն իր հերթին առաջացրել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի պահանջների խախտում: Նշված հոդվածի կանոնների համաձայն՝ դատարանի վրա պարտականություն է դրված գործը քննելիս գործի ապացույցները հետազոտել անմիջականորեն՝ ծանոթանալ գրավոր ապացույցներին, զննել իրեղեն ապացույցները, լսել փորձագետների եզրակացությունները, վկաների ցուցմունքները և գործին մասնակցող անձանց ցուցմունքները: Առանց այս պարտականությունների պատշաճ կատարման, օրինական և պատճառաբանված դատական ակտ կայացնելն, ըստ բողոքաբերի, բացառվում է:

Հակընդդեմ հայցադիմումում և դատարանում տված ցուցմունքներում Պատասխանողն արտահայտել է իր դիրքորոշումը, պնդելով, որ ինքը Հայցվորին որպես գործարքի կողմ չի ճանաչում, որ Հայցվորի հետ երբևէ գործարք չի կնքել և գումար կամ գույք իրենից չի ստացել: Ըստ բողոքաբերի՝ գործարքը տեղի է ունեցել իր /Պատասխանողի/ և Հայցվորի ամուսնու միջև, սակայն նախքան ներկայացրած պայմանագրի վրա նշված ժամկետը: Պատասխանողը կտրականապես ժխտել է Հայցվորի հետ որևէ պայմանագիր կնքելու փաստը:

Ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարանները, անտեսելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի պահանջները, գերակշռող ապացույց են համարել Հայցվորի կողմից ներկայացված 2012թ. ապրիլի 11-ի պայմանագիրը և դրանում առկա ստացականը, միաժամանակ անտեսելով Պատասխանողի ներկայացրած հաշվարկ-փաստաթղթերը, դրանով իսկ զրկելով Պատասխանողին իր պահանջներն ու առարկությունները հիմնավորելուց:

Բողոք բերողը նշել է, որ սկզբնական հայցի հիմքում ընկած պայմանագրի կնքման օր է նշված 2012թ. ապրիլի 11-ը: Գործում առկա են թվով երկու փաստաթուղթ-հաշվարկներ, որոնցից մեկը լրացված է հայցվորի ներկայացուցչի ձեռագրով, իսկ մյուսում առկա են գրառումներ՝ սկսած 2012թ. հունվարի 14-ից մինչև 2014թ. հոկտեմբերի 19-ն ընկած ժամանակահատվածը և նշված են տարբեր չափի գումարներ: Նշվածն ապացույց է, որ Պատասխանողը Հայցվորի ամուսնուն գումարներ էր տրամադրում, մինչդեռ ըստ Հայցվորի ներկայացուցչի՝ այդ գումարներն ինքը ստացել է Պատասխանողից և հաշվարկել, որպես տոկոսագումարներ:

Բողոքաբերը շեշտել է, որ անհիմն են դատարանների հետևություններն այն մասին, որ կողմերի միջև կնքվել է փոխառության պայմանագիր, որով Հայցվորը գումար է տրամադրել Պատասխանողին, քանի որ հնարավոր չէ

ապրիլ ամսին կնքված պայմանագրի համար տոկոսներ վճարել հունվար ամսից: Նշված փաստին ստորադաս դատարաններն իրավական գնահատական չեն տվել:

Ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարաններն ընդունելով հայցի հիմքում ընկած պայմանագիրը, միաժամանակ պատշաճ իրավական գնահատական չեն տվել պայմանագրի 4.3-րդ կետին, որի համաձայն՝ փոխառության գումարը հետ վերադարձնելուց հետո Փոխատուն պարտավորվում է ք.Ստեփանակերտ, Աջափնյակ 17/2 հասցեում գտնվող անշարժ գույքը, որը կողմերի համաձայնությամբ գնահատվում է 5.000 /հինգ հազար/ ԱՄՆ դոլար, հանձնել Լ.Աղաջանյանին: Դատաքննության ընթացքում Հայցվորը պարզաբանել է, որ այդ անշարժ գույքը հանդիսանում է փոխառության ապահովություն: Գործում նաև առկա է 2012թ. ապրիլի 10-ին կնքված առուվաճառքի պայմանագիրը, որի համաձայն՝ Ս.Հարությունյանն այդ գույքը «վաճառել է» գործով հայցվորին: Այս հարցին իրավական գնահատական ստորադաս դատարանների կողմից չի տրվել, իսկ գույքը, ըստ բողոք բերողի, արդեն դրվել է վաճառքի:

Բողոքաբերը նաև ավելացրել է, որ Հայցվորն անշարժ գույքի մասով դատարանին պահանջ չի ներկայացրել և պայմանագիրն այդ մասով չի վիճարկել, ուստի նշված գույքը համարվում է Պատասխանողին պատկանող, սակայն այդ առանցքային նշանակություն ունեցող հարցի վերաբերյալ ստորադաս դատարանները նույնպես դիրքորոշում չեն հայտնել:

Բողոքաբերը խնդրել է բողոքարկված մասով բեկանել և փոփոխել սույն գործով Վերաքննիչ դատարանի 2017թ. ապրիլի 20-ի որոշումը, կայացնելով դատական ակտ՝ հակընդդեմ հայցը բավարարելու և սկզբնական հայցը մերժելու մասին:

3. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

Հայցվորը և նրա ներկայացուցիչը գտնում են, որ վճռաբեկ բողոքն ակնհայտ անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների կողմից գործի քննության ընթացքում նյութական և դատավարական նորմերի խախտումներ թույլ չեն տրվել և դատաքննության ընթացքում ձեռք բերված և հիմնավորված ապացույցների հիման վրա կայացվել են օրինական դատական ակտեր:

Պատասխանողի ներկայացուցիչը, փաստարկելով ստորադաս դատարանների կողմից ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի մի շարք հոդվածների խախտման մասին, չի հիմնավորել իր կողմից նշված խախտումները:

Պատասխանողի պնդումներն այն մասին, որ Հայցվորին չի ճանաչում որպես գործարքի կողմ, որ Հայցվորի հետ գործարք չի կնքել և գումար կամ այլ գույք չի ստացել, անհիմն են, քանի որ առկա է գրավոր ապացույց՝ Պատասխանողի կողմից ստորագրված պայմանագիրը:

Միաժամանակ, Հայցվորը և ներկայացուցիչը նշել են, որ Պատասխանողի պնդումները Ս.Միրզոյանի հետ համատեղ գործունեություն իրականացնելու մասին, հորինված են և նպատակ ունեն մոլորության մեջ գցել դատարանին:

4. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Ըստ 2012թ. ապրիլի 11-ի փոխառության պայմանագրի՝ Լ.Աղաջանյանի և Ռ.Խասապետյանի միջև կնքվել է պայմանագիր, որով Ռ.Խասապետյանը պարտավորվում է Լ.Աղաջանյանին հանձնել 20.000 /քսան հազար/ ԱՄՆ դոլար, որի դիմաց Լ.Աղաջանյանը պարտավորվում է վճարել յուրաքանչյուր ամիս 1,8 տոկոսադրույքով տոկոսագումարներ և վերադարձնել փոխառության գումարը հետևյալ եղանակով՝ 1. մինչև 7.12.2015թ.՝ 5.000 /հինգ հազար/ ԱՄՆ դոլար, 2. մինչև 7.12.2016թ.՝ 10.000 /տասը հազար/ ԱՄՆ դոլար, 3. մինչև 7.12.2017թ.՝ 5.000 /հինգ հազար/ ԱՄՆ դոլար:

2. Նշված պայմանագրի 4.3 և 4.4 կետերի համաձայն՝ փոխառության գումարը հետ վերադարձնելուց հետո փոխատուն պարտավորվում է ք.Ստեփանակերտ, Աջափնյակ 17/2 հասցեում գտնվող անշարժ գույքը, որը կողմերի համաձայնությամբ գնահատվում է 5.000 /հինգ հազար/ ԱՄՆ դոլար, հանձնել Լ.Աղաջանյանին: Վերոնշված տարածքի հարկերը, տուրքերը, գրանցման հետ կապված ծախսերի վճարումը, մինչև փոխառության գումարի լրիվ հետ վերադարձնելը, կատարում է Լ.Աղաջանյանը՝ իր անձնական միջոցներով:

3. Ըստ պայմանագրին կից Լ.Աղաջանյանի կողմից ստորագրված ստացականի, Լ.Աղաջանյանը Ռ.Խասապետյանից ստացել է պայմանագրով նախատեսված 20.000 /քսան հազար/ ԱՄՆ դոլար գումարը:

5. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա:

Սույն վճռաբեկ բողոքի շրջանակներում Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ դատարանի կողմից գործում առկա բոլոր ապացույցների լրիվ և բազմակողմանի հետազոտման և գնահատման խնդրին՝ վերահաստատելով նախկինում Գերագույն դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են՝ 1. գրավոր և իրեղեն ապացույցներով, 2. փորձագետների եզրակացություններով, 3. վկաների ցուցմունքներով, 4. գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Հայցի հիմքը կազմող իրավաբանական փաստը և հայցի առարկան հանդիսացող նյութաիրավական պահանջը սկզբում համարվում են ենթադրյալ, վիճելի և կարող են հաստատվել միայն դատաքննության ընթացքում՝ դատական ապացուցման միջոցով, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Ընդ որում, գործին մասնակցող յուրաքանչյուր անձ իր կողմից վկայակոչված փաստերը հիմնավորելու համար պարտավոր է ներկայացնել այդ փաստերը հիմնավորող ապացույցներ: Ելնելով կողմերի դատավարական իրավահավասարության սկզբունքից՝ անհրաժեշտ է դատաքննության ընթացքում հետազոտել կողմերի ներկայացրած յուրաքանչյուր ապացույց, որը համապատասխանում է վերաբերելիության և թույլատրելիության պահանջներին՝ կողմերի պահանջներն ու առարկությունները հաստատելու կամ հերքելու համար:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ հոդվածի /ներկայումս գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 876-րդ հոդվածի/ 1-ին մասի համաձայն՝ փոխառության պայմանագրով մեկ կողմը /փոխատուն/ մյուս կողմի /փոխառուի/ սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միևնույն գումարի դրամ /փոխառության գումարը/ կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք: Օրենքի նշված նորմի մեկնաբանությունից հետևում է, որ փոխառության պայմանագիրն իրենից ներկայացնում է գրավոր ձևով կնքվող գործարք, որի ուժով փոխատուն փոխառուին է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշերով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետներում և կարգով այն վերադարձնել: Նույն օրենսգրքի 882-րդ հոդվածի /ներկայիս գործող 881-րդ հոդվածի/ 1-ին մասի համաձայն՝ փոխառուն իրավունք ունի վիճարկել փոխառության պայմանագիրը, եթե ապացուցում է, որ ինքը փոխատուից իրականում դրամ կամ այլ գույք չի ստացել կամ ստացել է պայմանագրում նշվածից ավելի պակաս քանակով: Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե փոխառության պայմանագիրը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերով վիճարկելիս պարզվում է, որ փոխառուն դրամը կամ այլ գույքն իրականում չի ստացել փոխատուից, փոխառության պայմանագիրը համարվում է չկնքված: Եթե դրամը կամ այլ գույքը փոխառուն փոխատուից ստացել է պայմանագրում

նշվածից ավելի պակաս քանակով, պայմանագիրը կնքված է համարվում ստացված քանակի գումարի կամ գույքի չափով:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեն այն հանգամանքները, թե Հայցվորի և Պատասխանողի միջև իրականում ինչպիսի պայմանագիր է կնքվել, ում կողմից և ինչքան դրամ կամ գույք է փոխանցվել ըստ պայմանագրի, քանի որ սույն գործով կողմերի բացատրությունները՝ գումար հանձնելու պահի, նպատակների և կողմերի վերաբերյալ, հակասական են:

Գերագույն դատարանը բազմիցս դիրքորոշում է հայտնել և փաստել, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 2012թ. ապրիլի 11-ին Լ.Աղաջանյանի և Ռ.Խասապետյանի միջև կնքվել է փոխառության պայմանագիր, որով Ռ.Խասապետյանը պարտավորվում է Լ.Աղաջանյանին հանձնել 20.000 /քսան հազար/ ԱՄՆ դոլար, որի դիմաց Լ.Աղաջանյանը պարտավորվում է վճարել յուրաքանչյուր ամիս 1,8 տոկոսադրույքով տոկոսագումարներ և վերադարձնել փոխառության գումարը հետևյալ եղանակով՝ 1. մինչև 7.12.2015թ.՝ 5.000 /հինգ հազար/ ԱՄՆ դոլար, 2. մինչև 7.12.2016թ.՝ 10.000 /տասը հազար/ ԱՄՆ դոլար, 3. մինչև 7.12.2017թ.՝ 5.000 /հինգ հազար/ ԱՄՆ դոլար: Ըստ պայմանագրին կից Լ.Աղաջանյանի կողմից ստորագրված ստացականի, Լ.Աղաջանյանը Ռ.Խասապետյանից ստացել է պայմանագրով նախատեսված 20.000 /քսան հազար/ ԱՄՆ դոլար գումարը: Պատասխանողը պնդել է, որ պայմանագիրը ստորագրել է առանց ընթերցելու, որ բոլոր հարաբերություններն իր և Ս.Միրզոյանի միջև են տեղի ունեցել և ուղղված են եղել համատեղ գործունեություն ծավալելու, որ Հայցվորն իրեն գումար չի տվել:

Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «Վերաքննիչ դատարանը գտնում է, որ գործի նյութերում գտնվող գրավոր ապացույցներն իրենց որակական հատկանիշներով գերակշռում են Պատասխանողի տված ցուցմունքներին՝ որպես ապացույցի, և հիմնավոր է համարում Դատարանի եզրահանգումը հայցը բավարարելու և հակընդդեմ հայցը մերժելու մասին:» Ավելին, Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարել Առաջին ատյանի դատարանի հետևյալ պատճառաբանությունը, և նշել, որ «Ս.Միրզոյանի գործողությունները՝ գումարը Պատասխանողին հանձնելու ուղղությամբ, կատարվել են Հայցվորի անունից և նրա փոխարեն, և Ս.Միրզոյանի կողմից հանձնված գումարը համարվում է հանձնված նաև Հայցվորի կողմից, երկրորդը՝ նրա այդ ցուցմունքը հակասում է իր իսկ կողմից ստորագրված ստացականում նշված բովանդակությանը, որից դիտվում է, որ նա Հայցվորից ստացել է 20.000 /քսան հազար/ ԱՄՆ դոլար/, երրորդը՝ էթե անգամ ընդունենք, որ Պատասխանողին 2012թ. հունվար ամսին փոխանցվել է 12.000 /տասներկու հազար/ ԱՄՆ դոլար և 3.000.000 /երեք միլիոն/ ՀՀ դրամ, կամ 8.000.000 /ութե միլիոն/ ՀՀ դրամ, ապա այդ ժամանակահատվածում գործող միջին փոխարժեքին համապատասխան 3.000.000 /երեք միլիոն/ ՀՀ դրամը դոլարային արտահայտությամբ, կազմում է

7.750 /յոթ հազար յոթ հարյուր հիսուն/ ԱՄՆ դոլար, որը գումարելով 12.000 /տասներկու հազար/ ԱՄՆ դոլարին ստացվում է 19.750 /տասնինը հազար յոթ հարյուր հիսուն/ ԱՄՆ դոլար, իսկ 8.000.000 /ութ միլիոն/ ՀՀ դրամը՝ 20.668 /քսան հազար վեց հարյուր վաթսուներեք/ ԱՄՆ դոլար:

Իր հերթին Առաջին ատյանի դատարանի վճռում նշված է՝ «Հայցվորն իր բացատրության մեջ նշել է, որ Պատասխանողի խնդրանքով, ամուսինն իր Հայցվորի համաձայնությամբ 2012թ. պարտքով տվել է 20.000 ԱՄՆ դոլար: ...Եվրոպա հյուրանոցում, Հայցվորի ամուսնու աշխատասենյակում, Պատասխանողին ամուսինը հաշվել ու տվել է գումարը, ինքն աշխատասենյակում չի մնացել, հաշվի առնելով, որ տղամարդիկ են, դրա կարիքը չի եղել ու չի էլ իմացել, որ հասնելու է սրան, դրա համար աշխատասենյակի կողքին սպասել է»: Հայցվորի ներկայացուցչի բացատրություններն այս փաստի վերաբերյալ նույնպես հակասական են. նա, մի կողմից, պնդել է, որ գումարը տրամադրվել է Պատասխանողին՝ իր աշխատասենյակում՝ Հայցվորի ներկայությամբ, մյուս կողմից, որ սենյակը փոքր լինելու պատճառով Հայցվորը սպասել է սենյակի մոտ: Գումարը ոչ թե Հայցվորից, այլ իր ամուսնուց ստանալու փաստը շեշտել է նաև Պատասխանողը, միաժամանակ բացատրելով, որ գումարը վերցրել է համատեղ գործունեություն ծավալելու համար, և որ իր և Հայցվորի միջև պարտավորություններ չեն ծագել: Նշված բացատրությունների իրարամերժ լինելը պատշաճ գնահատման չի արժանացել ստորադաս դատարանների կողմից, ինչը Գերագույն դատարանը համարում է ԼՂՀ քաղաքացիական դատավարության 49-րդ հոդվածի պահանջների խախտում:

Բացի դրանից, Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները, վիճելի իրավահարաբերության շրջանակներում, պատշաճ քննարկման և իրավական գնահատման առարկա՝ չեն դարձրել փոխառության պայմանագրի 4.3 և 4.4 կետերը, այն է՝ փոխառության գումարը հետ վերադարձնելուց հետո փոխատուն պարտավորվում է ք.Ստեփանակերտ, Աջափնյակ 17/2 հասցեում գտնվող անշարժ գույքը, որը կողմերի համաձայնությամբ գնահատվում է 5.000 /հինգ հազար/ ԱՄՆ դոլար, հանձնել Լ.Աղաջանյանին: Վերոնշված տարածքի հարկերը, տուրքերը, գրանցման հետ կապված ծախսերի վճարումը, մինչև փոխառության գումարի լրիվ հետ վերադարձնելը, կատարում է Լ.Աղաջանյանը՝ իր անձնական միջոցներով: Նշված կետն ունի կարևոր նշանակություն՝ պայմանագրի կողմերի միջև ենթադրյալ փոխադարձ պարտավորությունների ծավալը հստակ պարզելու համար:

Մասնավորապես նշված հարցը պատշաճ իրավական գնահատման ենթարկելու անհրաժեշտությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ըստ բողոքաբերի՝ նշված անշարժ գույքն արդեն իսկ օտարվել է Հայցվորի կողմից, ինչը Գերագույն դատարանի դատական նիստում չի ժխտել նաև Հայցվորի ներկայացուցիչը:

Գերագույն դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների կողմից թույլ տրված դատական սխալը հիմք է տալիս բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նոր քննության, որի ընթացքում անհրաժեշտ է պատշաճ քննարկման և գնահատման առարկա դարձնել ոչ միայն այն հարցը, թե Հայցվորի և Պատասխանողի միջև ինչ իրավահարաբերություններ են ծագել, այլ նաև, որ եթե պարտավորությունները ծագել են փոխառության պայմանագրի շրջանակներում, ապա անհրաժեշտ է հստակ

որոշել մարման ենթակա գումարները, հաշվի առնելով բոլոր ապացույցները, այդ թվում՝ գրավադրված գույքի օտարումը, քանի որ միայն այդ բոլոր ապացույցների՝ իրենց համակցության մեջ, հետազոտման և գնահատման արդյունքում է հնարավոր կայացնել հիմնավորված դատական ակտ:

Վերագրյալը հաշվի առնելով՝ Գերագույն դատարանը եզրահանգում է, որ սույն գործով ստորադաս դատարանների կողմից չի իրականացվել գործի լրիվ և բազմակողմանի քննություն: Մասնավորապես՝ կողմերից յուրաքանչյուրը ներկայացրել է իր դիրքորոշումը, ընդ որում, նշված դիրքորոշումները հակասական են ոչ միայն միմյանց նկատմամբ, այլև առկա են հակասություններ միևնույն անձի տարբեր ժամանակահատվածներում ներկայացրած բացատրություններում՝ գումարը տրամադրելու փաստի կապակցությամբ, ինչը սույն գործի համար էական է:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Գերագույն դատարանը դիտում է բավարար՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի ուժով վճռաբեկ բողոքը մասնակիորեն բավարարելու, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու համար:

Գերագույն դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, որի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով Գերագույն դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վճռաբեկ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը:

Հաշվի առնելով գործով նոր քննության անհրաժեշտությունը, վճռաբեկ բողոքի մյուս հիմքերին Գերագույն դատարանը չի անդրադառնում:

6. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

Նույն օրենսգրքի 69-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան: Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են սույն հոդվածի կանոններին համապատասխան:

Սույն գործով բողոքաբերը միջնորդություն էր ներկայացրել Գերագույն դատարանին՝ պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու և խնդրել է պետական տուրքի հարցին անդրադառնալ վերջնական դատական ակտ կայացնելիս: Նշված միջնորդությունը բավարարվել է Գերագույն դատարանի 2017թ. հունիսի 2-ի որոշմամբ:

Միաժամանակ Գերագույն դատարանն արձանագրում է, որ ըստ բողոքին կցված անդորրագրերի՝ Լ.Աղաջանյանը սույն վճռաբեկ բողոքի համար վճարել է 90.000 /իննսուն հազար/ ՀՀ դրամ որպես վճռաբեկ բողոքի համար նախատեսված պետական տուրքի գումար:

Գերագույն դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման մասնակիորեն, իսկ գործն ուղարկվում է Առաջին աստյանի դատարան՝ նոր քննության, իսկ այդ պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ դատական ծախսերի, այդ թվում նաև հետաձգված պետական տուրքի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության արդյունքներով:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ ԼՂՀ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Պատասխանող Լեոնիդ Սուրենի Աղաջանյանի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2017թ. ապրիլի 20-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստյանի դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի հարցին անդրադառնալ նոր քննության արդյունքներով:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ստորագրություն
ստորագրություն

Վ. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում Վարչական գործ ԸԻԴ 0097/05/16թ.
Վարչական գործ ԸԻԴ 0097/05/16թ.
Նախագահող դատավոր՝ Կ.Սաղյան
Դատավորներ՝ Հ.Աբրահամյան
Ն.Գրիգորյան

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք.Ստեփանակերտ 26-ին հունիսի 2017թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)՝ վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր Ի.Կարապետյանի
դատավորներ՝ Վ.Հովսեփյանի
Գ.Արզումանյանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Համիկ Մովսեսի Համբարձումյանի ընդդեմ ԼՂՀ Ասկերանի շրջանի Խնածախ համայնքի աշխատակազմի, Միրա Հրանտի Բարսեղյանի՝ ԼՂՀ Ասկերանի շրջանի Խնածախ համայնքի ղեկավար Մ.Նիկողոսյանի կողմից Հենրիխ Մովսեսի Համբարձումյանի անվամբ 2010թ. փետրվարի 16-ին տրված տնտեսական գրքի քաղվածքի առ ոչինչ լինելը ճանաչելու մասին վարչական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2017թ. մայիսի 10-ի որոշման դեմ հայցվոր Համիկ Համբարձումյանի և նրա ներկայացուցիչ Ա.Սադաթյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

2016թ. փետրվարի 5-ին Համիկ Համբարձումյանը /այսուհետ՝ նաև Հայցվոր/ հայցադիմում է ներկայացրել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի /Վարչական/ դատարան /այսուհետ՝ նաև Վարչական դատարան/ ընդդեմ ԼՂՀ Ասկերանի շրջանի Խնածախ համայնքի աշխատակազմի, Հենրիխ Մովսեսի Համբարձումյանի իրավահաջորդ Միրա Հրանտի Բարսեղյանի, երրորդ անձ՝ ԼՂՀ կառավարության աշխատակազմի՝ ԼՂՀ Ասկերանի շրջանի Խնածախ համայնքի ղեկավար Մ.Նիկողոսյանի կողմից Հենրիխ Մովսեսի Համբարձումյանի անվամբ 2010թ. փետրվարի 16-ին տրված տնտեսական գրքի քաղվածքի առ ոչինչ լինելը ճանաչելու մասին պահանջով:

Վարչական դատարանի 2016թ. փետրվարի 12-ի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է:

Նշված որոշման դեմ 2016թ. փետրվարի 24-ին վերաքննիչ բողոք են ներկայացրել Հայցվորը և նրա ներկայացուցիչ Ա.Սադաթյանը, որը Վերաքննիչ

դատարանի 2016թ. մարտի 4-ի որոշմամբ բավարարվել է, և Վարչական դատարանի 2016թ. փետրվարի 12-ի որոշումը վերացվել է:

Վարչական դատարանի 2016թ. մարտի 30-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ և հարուցվել վարչական գործ:

Վարչական դատարանի 2017թ. փետրվարի 27-ի վճռով հայցը մերժվել է:

Հայցվորի և նրա ներկայացուցիչ Ա.Մադաթյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանի 2017թ. մայիսի 10-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է, և Վարչական դատարանի 2017թ. փետրվարի 27-ի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով 2017թ. հունիսի 6-ին վճռաբեկ բողոք են բերել Հայցվորը և նրա ներկայացուցիչ Ա.Մադաթյանը, խնդրելով բեկանել Վերաքննիչ դատարանի 2017թ. մայիսի 10-ի որոշումը և փոփոխել այն ու կայացնել նոր դատական ակտ՝ հայցապահանջը բավարարելու մասին կամ գործն ուղարկել Վարչական դատարան՝ նոր քննության:

Գերագույն դատարանի 2017թ. հունիսի 21-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Բողոքը բերվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքով:

Ըստ բողոքաբերների՝ ստորադաս դատարանները խախտել են ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, 24-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 113-րդ և 117.12-րդ հոդվածների 1-ին մասերի պահանջները, գործով անհրաժեշտ միջոցներ չեն ձեռնարկել Հայցվորի շահագրգռվածության հարցը պարզելու համար, իսկ Վերաքննիչ դատարանը չի կիրառել ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի ու «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ԼՂՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջները և ԸԻԴ 0188/05/15թ. վարչական գործով Գերագույն դատարանի 2016թ. մայիսի 11-ի որոշման սխալ մեկնաբանման արդյունքում կայացրել է օրենքի պահանջներին հակասող դատական որոշումներ:

Բողոքաբերներն իրենց պնդումները հիմնավորում են հետևյալ փաստարկներով.

Ստորադաս դատարանները հայցի մերժման հիմքում դրել են այն հանգամանքը, որ վիճելի վարչական ակտով հայցվորի որևէ իրավունք չի խախտվել և նման եզրահանգման համար վկայակոչել են ԸԻԴ 0188/05/15թ. վարչական գործով Գերագույն դատարանի 2016թ. մայիսի 11-ի որոշման դրույթները, միաժամանակ անտեսելով, որ նշված գործով վիճարկվել է ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի վավերականության հարցը, որի կապակցությամբ Գերագույն դատարանը հստակ նշել է, որ նման հարց ստորադաս դատարանները կարող են քննության առարկա դարձնել միայն այն դեպքում, երբ գործով հիմնավորված լինի Հայցվորի շահագրգիռ անձ/ժառանգությունն ընդունած ժառանգ/ հանդիսանալու հանգամանքը: Եվ եթե ԸԻԴ 0188/05/15թ. վարչական գործով վիճարկվել է պատասխանողի անվամբ տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի վավերականության հարցը, որը նշանակում է, որ ժառանգատուի մահից հետո առկա է

եղել ժառանգության զանգված, որի հանդեպ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր է տրվել ժառանգներից միայն մեկի՝ գործով պատասխանող կողմի անվամբ, ապա նման պարագայում, դատարանը պարտավոր էր պարզելու հայցվորի շահագրգիռ անձ հանդիսանալու հանգամանքը:

Բողոքաբերների կարծիքով՝ վիճարկվող քաղվածքի կեղծ լինելու պատճառով Հայցվորի հոր մահից հետո ժառանգման ենթակա անշարժ գույքը դուրս է մնացել նրա ժառանգության զանգվածից, որի պատճառով վերացվել է ինչպես ժառանգությունն ընդունելու խնդրանքով նոտարական գրասենյակին դիմելու և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր ստանալու, այնպես էլ փաստացի տիրապետման եղանակով ժառանգությունն ընդունելու հնարավորությունը:

Բողոքաբերները գտնում են, որ Վարչական դատարանը, բողոքարկվող գործով Հայցվորի շահագրգռվածության հարցը պարզելու նպատակով, իր նախաձեռնությամբ որևէ դատավարական գործողություն չի կատարել, չնայած այդ կապակցությամբ Հայցվորի տված ցուցմունքները չեն հերքվել և չեն վիճարկվել պատասխանողի իրավահաջորդի կողմից: Այդ այն դեպքում, երբ գործում չկա որևէ ապացույց առ այն, որ Հենրիխ Համբարձումյանը հոր մահից հետո, մինչև տնտեսական գրքից քաղվածքի տրամադրումը, ժառանգությունն ընդունելու ուղղությամբ որևէ կոնկրետ գործողություն է կատարել:

Բողոքաբերները նաև նշել են, որ վիճարկվող վարչական ակտով խախտվել է ոչ միայն Հայցվորի կողմից ժառանգությունն ընդունելու կամ նման պահանջով դատարան դիմելու իրավունքը, այլ նաև՝ Հենրիխ Համբարձումյանի սեփականության իրավունքի գրանցումը դատական ճանապարհով վիճարկելու Հայցվորի իրավունքը: Բացի այդ, Վարչական դատարանի վճռով և այն օրինական ուժի մեջ թողնելու Վերաքննիչ դատարանի անօրինական որոշմամբ կանխապես վճռվել է նաև Վարչական դատարանի վարույթում կասեցված ԸԲԴ 0270/05/15թ. վարչական գործի հետագա ճակատագիրը:

Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերները խնդրել են բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2017թ. մայիսի 10-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ հայցապահանջը բավարարելու մասին կամ գործն ուղարկել Վարչական դատարան՝ նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

1. Համիկ և Հենրիխ Մովսեսի Համբարձումյանները հանդիսանում են ամուսիններ Մովսես Բողոքանի Համբարձումյանի և Նինա Դարչինի Ավագյանի որդիները:

2. 11.04.1984թ. առուվաճառքի պայմանագրի պատճենի համաձայն՝ Նինա Դարչինի Ավագյանը Կառլեն Արշակի Պետրոսյանից գնել է Ասկերանի շրջանի Խնածախ գյուղում գտնվող քարաշեն, մեկ հարկանի, մեկ սենյականոց 20 քառ. մետր մակերեսով բնակելի տունը՝ տեղակայված 1.000 քառ. մետր հողամասի վրա:

3. 13.04.1999թ. տրամադրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի պատճենի համաձայն՝ Նինա Դարչինի Ավագյանի /մահացած 1993թ. ապրիլի 24-ին/ մահից հետո թողնված ժառանգական գույքը՝ բաղկա-

ցած Ասկերանի շրջանի Լեռնավան գյուղում գտնվող սեփական տնատիրությունից /.../ գույքի նկատմամբ հավասար բաժիններով ժառանգներ են համարվում յուրաքանչյուրը. որդին՝ Հենրիխ Մովսեսի Համբարձումյանը, բնակվող Ստեփանակերտ քաղաքի Ս.Դավթի փողոցի թիվ 56 շենքի թիվ 25 բնակարանում:

4. Համաձայն մահվան ակտի գրանցման մասին 26.10.2015թ. տեղեկանքի՝ Մովսես Բողդանի Համբարձումյանը մահացել է 1999թ. ապրիլի 4-ին:

5. 1999թ. ապրիլ ամսում տրված՝ անհատական բնակարանային ֆոնդի բնակելի տան տեխնիկական անձնագրի պատճենի համաձայն՝ Ասկերանի շրջանի Լեռնավան /Խնածախ/ գյուղում գտնվող բնակելի տան նկատմամբ գրանցվել է Հենրիխ Մովսեսի Համբարձումյանի սեփականության իրավունքը, 13.04.1999թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի հիման վրա:

6. Ըստ Ասկերանի շրջանի Խնածախ համայնքի ղեկավար Մ.Նիկողոսյանի կողմից 16.02.2010թ. տրված տնտեսական գրքից քաղվածքի՝ 1998թ. հոկտեմբերի 18-ին Հենրիխ Մովսեսի Համբարձումյանին հատկացվել է 0,094 հա տնամերձ հողամաս՝ տեղաբաշխված մեկ հատ առանձին հողակտորի վրա, որը գրանցված է թիվ 1 տնտեսական գրքի 173 համարի տակ:

7. Թիվ 107868 վկայականի համաձայն՝ ԼՂՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-4 մատյանի 076753 համարի տակ 2010թ. մարտի 15-ին գրանցվել է Հենրիխ Մովսեսի Համբարձումյանի սեփականության իրավունքը ԼՂՀ Ասկերանի շրջանի Խնածախ գյուղում տեղակայված 0,094 հա տնամերձ հողամասի և 111,10 քառ. մետր մակերեսով բնակելի տան նկատմամբ, որի հիմքում դրվել է տնտեսական գրքից առ 16.02.2010թ. քաղվածքը և հատակագիծը:

8. ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի վարչության տեղեկատվական բաժնի պետի կողմից 04.02.2016թ. տրված թիվ 0206 տեղեկանքից հետևում է, որ համաձայն Ասկերանի շրջանի Խնածախ համայնքի կադաստրային քարտեզի և տեղեկագրի՝ 010-012 միավորը տեղեկագրում նշված է Մովսես Համբարձումյանի անվամբ:

9. Ասկերանի շրջանի Խնածախ համայնքի ղեկավար Մ.Նիկողոսյանի կողմից 21.10.2015թ. տրված պատասխան գրության համաձայն՝ Հենրիխ Մովսեսի Համբարձումյանի անվամբ թիվ 1 տնտեսական գրքի թիվ 173 անձնական հաշվի էջի քսերոպատճենը հնարավոր չէ տրամադրել այն գոյություն չունենալու պատճառով: /.../ Հենրիխ Մովսեսի Համբարձումյանը Խնածախի համայնքի մշտական բնակիչ չէր համարվում, ուստի նման կարգավիճակ ունեցող անձանց հաշվառքը կատարվում էր առանձին ցուցակով /.../:

10. Թիվ 0096/05/16թ. վարչական գործով ԼՂՀ Գերագույն դատարանի 2016թ. դեկտեմբերի 14-ի որոշմամբ տնտեսական գրքից արված քաղվածքը համարվել է որպես վարչական ակտ և այն առ ոչինչ համարելու մասին հայցվորի պահանջը բավարարվել է՝ հիմք ընդունելով, որ դրանով խախտվել է ժառանգությունն ընդունելու հայցվորի իրավունքը:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ սույն դեպքում Գերագույն դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ վարչական դատավարության գործընթացում գործի փաստերն ի պաշտոնե պարզելու սկզբունքի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. գործի քննության ընթացքում ինչ դերակատարություն պետք է ունենա Վարչական դատարանը՝ ապահովելու իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ընդունած ակտերի դեմ ֆիզիկական կամ վարչական իրավաբանական անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության իրացման հարցում:

Գերագույն դատարանը հարկ է համարում նշել, որ մարդու իրավունքների և ազատությունների ամենահուսալի և արդյունավետ միջոցը դատական պաշտպանությունն է, որն ամրագրված է Արցախի Հանրապետության Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով /2006թ. ԼՂՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի 1-ին մաս/: Այս հոդվածը Արցախի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի 4-րդ մասի տրամաբանական հետևանքն է, որը պետության վրա պարտավորություն է դնում ապահովելու մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին և նորմերին համապատասխան:

Իսկ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Արցախի Հանրապետության Սահմանադրության 63-րդ հոդվածով և Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Վարչական արդարադատությանը բնորոշ կարևորագույն առանձնահատկություններից մեկը դատարանի կողմից գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե /ex officio/ պարզելու սկզբունքն է, որը նպատակաուղղված է վարչական արդարադատության առջև դրված առանձնահատուկ խնդիրների լուծմանը:

Գործի նյութերից նկատելի է, որ Հայցվորը և նրա ներկայացուցիչը սկսած 2015թ., տարբեր հայցապահանջներով դիմել են Վարչական դատարան՝ մի կողմից՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու /ԸԻԴ 0270/05/15թ. վարչական գործ, որի վարույթը կասեցված է/, մյուս կողմից՝ վարչական ակտերի առ ոչինչ լինելը ճանաչելու և հետևանքները կիրառելու /ԸԻԴ 0110/05/16թ. վարչական գործ/, երրորդ դեպքում՝ վարչական ակտն առ ոչինչ ճանաչելու /բողոքարկված գործը/, իսկ չորրորդ դեպքում՝ ժառանգությունն

ընդունած ժառանգ ճանաչելու և իրավունքի գրանցումը մասնակիորեն անվավեր ճանաչելու պահանջների վերաբերյալ:

Բոլոր դեպքերում վարչական ակտն անվավեր կամ առ ոչինչ ճանաչելը չպետք է ինքնանպատակ լինի:

Համաձայն հայցադիմումի՝ Հայցվորը տիրապետման իրավունքով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու իր ենթադրյալ իրավունքները հետագայում իրացնելու նպատակով, տարբեր բնույթի վարչական հայցերով դիմել է դատարան՝ ըստ էության բարձրացնելով իր ժառանգման իրավունքների ենթադրյալ խախտումների վերաբերյալ հարցեր: Վարչական դատարանը 2016թ. փետրվարի 12-ի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժել է՝ վեճը դատարանում քննության ենթակա չլինելու պատճառաբանությամբ:

Վերաքննիչ դատարանի կողմից Վարչական դատարանի անհիմն որոշումն վերացնելուց և հայցադիմումը վարույթ ընդունելուց ու վարչական գործ հարուցելուց հետո միայն գործով նախնական դատական նիստը նշանակվել է 2016թ. հունիսի 15-ին, որի արձանագրությունից նկատելի է, որ Վարչական դատարանը բավարարվել է միայն Հայցվորի և նրա ներկայացուցչի դիրքորոշումների ձևական քննարկմամբ: Մինչդեռ Վարչական դատարանի նման դիրքորոշումը հակասում է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի պահանջներին, քանի որ այդ հոդվածի դրույթների իրականացման ընթացքում դատարանն օժտված է ակտիվ դերակատարությամբ: Իսկ դա նշանակում է, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքի /որպիսի սկզբունք գոյություն չունի քաղաքացիական դատավարությունում/ համաձայն՝ դատարանի ակտիվ դերակատարությունն արտահայտվում է, մասնավորապես, որոշակի դատավարական գործողություններ կատարելիս դատավարության մասնակիցներին օժանդակելու՝ վարչական դատարանի պարտականությամբ:

Վերոնշյալ հոդվածի համատեքստում, գործը դատաքննության նախապատրաստելու փուլի կանոնների ճիշտ կիրառումն ապահովում է օրինական և հիմնավորված դատական ակտի կայացումը: Այնինչ բողոքարկվող գործով Հայցվորը, սխալ ձևակերպելով իր հայցային պահանջները, ակնկալել է վարչական դատավարության կարգով վերականգնել իր խախտված իրավունքները: Սակայն Վարչական դատարանը չի ղեկավարվել ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի պահանջներով, որի կատարման դեպքում կապահովվեր Հայցվորի ենթադրյալ խախտված իրավունքների դատական պաշտպանությունը: Գերագույն դատարանը գտնում է, որ հայցատեսակի ընտրության սուբյեկտիվ իրավունքը բոլոր դեպքերում պատկանում է հայցվորին, սակայն այն հստակեցնելու կամ ճիշտ հայցատեսակով փոխարինելու առաջարկությունը՝ դատարանին:

Վարչական դատարանը, անդրադառնալով Հայցվորի մոտ իրավական շահագրգռվածության վավերապայմանների առկայությունն ապացուցված լինելու հանգամանքին և վերլուծելով 1964թ. ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի դրույթները, հայցապահանջի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ «1999թ. ապրիլի 4-ից մինչև նույն թվականի հոկտեմբերի 4-ը Հայցվորը պետք է նոտարին դիմելու կամ ժառանգական գույքը փաստացի տիրապետելու կամ կառավարելու եղանակով ընդունել իր հոր կողմից թողնված, ժառանգության համապատասխան բաժինը, որպեսզի նա իրավունք ձեռք բերեր վիճարկելու վարչական ակտը»:

Վերաքննիչ դատարանը, վերահաստատելով Վարչական դատարանի դիրքորոշումները, միննույն ժամանակ նշել է, որ վիճելի վարչական ակտով Հայցվորի որևէ իրավունք չի խախտվել:

Նշված դիրքորոշումների կապակցությամբ Գերագույն դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները սխալ են ընկալել 1999թ. ապրիլի 13-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայականի բովանդակությունը, որ իրբն Նինա Ավագյանի մահից /24.04.1993թ./ հետո թողնված ժառանգական գույքը՝ բաղկացած Ասկերանի շրջանի Լեռնավան /Խնածախ/ գյուղում գտնվող սեփական տնատիրությունից /.../ ժառանգել է որդին՝ Հենրիխ Մովսեսի Համբարձումյանը: Գերագույն դատարանը փաստում է, որ նշված վկայականում պարզորոշ նշված է, որ Նինա Ավագյանի մահից հետո թողնված ժառանգական գույքի նկատմամբ հավասար բաժիններով ժառանգներ են հանդիսանում յուրաքանչյուրը՝ որդին՝ Հենրիխ Մովսեսի Համբարձումյանը: Իսկ դա նշանակում է, որ ժառանգատուի մյուս երկու որդիները՝ Համիկ և Համլետ Մովսեսի Համբարձումյանները, նույնպես ժառանգական գույքի նկատմամբ հավասար բաժիններով ժառանգներ են հանդիսացել:

Տվյալ դեպքում, հիմնավորված են վճռաբեկ բողոքի այն փաստարկները, որ չնայած դատաքննության ընթացքում Հայցվորի տված ցուցմունքները Վարչական դատարանի համար կասկածանքի առիթ չեն տվել, բայց ստորադաս դատարաններն իրենց որոշումներում շեշտել են, որ ծնողների ժառանգությունն ընդունելու կապակցությամբ Հայցվորն ապացույցներ չի ներկայացրել: Բողոքաբերները, չհամաձայնվելով ստորադաս դատարանների նման դիրքորոշումներին, վճռաբեկ բողոքին կցել են նոտարական կարգով հաստատված վկայություն, որից նկատելի է, որ Խնածախ համայնքի մի խումբ բնակիչներ հաստատում են Հայցվորի և նրա երկու եղբայրների կողմից իրենց ծնողների մահից հետո նրանց պատկանող բնակարանն օգտագործելու և այն տիրապետելու հանգամանքը: Գերագույն դատարանը, ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի «Գերագույն դատարանում գործի քննության սահմանները» վերտառությամբ 118.14-րդ հոդվածի ուժով կաշկանդված է նշված փաստաթղթին որևէ գնահատական տալուց: Այդ համատեքստում Գերագույն դատարանի դատական նիստում Հայցվորը նաև հայտարարել է, որ իր և եղբոր՝ Համլետ Համբարձումյանի անունից հայց են ներկայացրել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և իրավունքի գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների վերաբերյալ և նշված հայցադիմումի քսերոպատճենը ներկայացրել գործը քննող դատական կազմին, որից նկատելի է, որ հայցադիմումը 23.06.2017թ. մուտքագրվել է ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանում և նրա ընթացքավորման հարցի լուծումը հանձնարարվել դատավոր Ռ. Ջհանգիրյանին:

Այսպիսով, Գերագույն դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությամբ և սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզելու, հետազոտելու և գնահատելու նպատակով, անհրաժեշտ է Վերաքննիչ դատարանի 2017թ. մայիսի 10-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նոր քննության:

Նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկման նոր քննության, ուստի Հայցվորի՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և իրավունքի գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու մասին հայցապահանջը ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից ընդունելու և քաղաքացիական գործ հարուցելու դեպքում, Գերագույն դատարանը նպատակահարմար է համարում քննարկել երկու՝ ըստ էության սկզբնական և ածանցյալ հայցապահանջները մեկ վարույթում քննելու հարցը:

Մինևույն ժամանակ Գերագույն դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցին անհրաժեշտ է անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2017 թվականի մայիսի 10-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքներով:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ստորագրություն **Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ստորագրություն **Վ.ՀՈՎՍԵՓՅԱՆ**
ստորագրություն **Գ.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ**

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում քրեական նյութ ԸԻԴ 0001 /11/17
Քրեական նյութ ԸԻԴ 0001/11/17
Նախագահող դատավոր՝ Ն. Գրիգորյան
Դատավորներ՝ Հ. Գրիգորյան
Կ. Սաղյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք. Ստեփանակերտ 27 հունիսի 2017թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան) վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր Գ. Արզումանյանի
դատավորներ՝ Ա. Հայրապետյանի

Գ. Գրիգորյանի

դռնբաց դատական նիստում քննելով ԼՂՀ գլխավոր դատախազության ՀՆՕՆՀ բաժնի դատախազ Ա. Սաֆարյանի անգործության դեմ ԸԻԴ 0001/11/17 քրեական նյութով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2017թ. մայիսի 23-ի որոշման դեմ ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա. Ավագյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

2017թ. հունվարի 18-ին Սուրեն Յուրիի Կարախանյանը բողոք է ներկայացրել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան) խնդրելով պարտավորեցնել ԼՂՀ գլխավոր դատախազության ՀՆՕՆՀ բաժնի դատախազ Ա. Գ. Սաֆարյանին՝ իր դիմումի առթիվ կայացնել օրենքով նախատեսված որոշում:

Առաջին ատյանի դատարանը՝ 2017թ. փետրվարի 10-ի որոշմամբ բողոքը մերժել է:

Նշված որոշման դեմ 2017թ. փետրվարի 21-ին վերաքննիչ բողոք է ներկայացրել Սուրեն Կարախանյանը:

ԼՂՀ վերաքննիչ դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2017թ. մարտի 21-ի որոշմամբ բողոքը մասնակիորեն բավարարել է՝ Առաջին ատյանի դատարանի 2017թ. փետրվարի 21-ի որոշումը բեկանել և նյութն ուղարկել է նույն դատարան՝ նոր քննության:

Առաջին ատյանի դատարանը՝ 2017թ. ապրիլի 13-ի որոշմամբ բողոքը մերժել է:

2017թ. ապրիլի 26-ին նշված որոշման դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել Սուրեն Կարախանյանը:

Վերաքննիչ դատարանը՝ 2017թ. մայիսի 23-ի որոշմամբ բողոքը բավարարել է՝ Առաջին ատյանի դատարանի 2017թ. ապրիլի 13-ի որոշումը բեկանել և ԼՂՀ գլխավոր դատախազությանը պարտավորեցրել է վերացնել անձի իրավունքների և ազատությունների խախտումները, այն է՝ Սուրեն Յուրիի Կարախանյանի՝ ԼՂՀ գլխավոր դատախազություն ներկայացրած 12.12.2016թ. դիմումի կապակցությամբ գործադրել ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 191-192-րդ հոդվածներում սահմանված իրավակարգավորումը:

2017թ. մայիսի 30-ին ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Ավագյանը վճռաբեկ բողոք է ներկայացրել Գերագույն դատարան:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գերագույն դատարանի 2017թ. հունիսի 13-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

1. Սուրեն Յուրիի Կարախանյանը 2016թ. դեկտեմբերի 13-ին դիմում է ներկայացրել ԼՂՀ գլխավոր դատախազություն հայտնելով, որ ԼՂՀ ԴԱՀԿ ծառայությունում իրականացվող 3-2771/16, 3-2772/16, 3-2773/16, 3-2774/16, 3-2775/16 կատարողական վարույթներով հանդիսանում է պահանջատեր և նշված վարույթներով կատարողական գործողությունները 2016թ. Սեպտեմբերի 26-ի և հոկտեմբերի 27-ի որոշումներով հետաձգվել են մեկ ամսով, սակայն նշված որոշումները չեն բխում գործող օրենքներից: Կարծիք է հայտնել, որ ԼՂՀ ԴԱՀԿ ծառայության հարկադիր կատարող Ա.Սարգսյանը նշված որոշումները կայացնելիս չարաշահել է պաշտոնական լիազորությունները և թույլ է տվել պաշտոնական լիազորությունների անցում, ինչի հետևանքով խախտվել է ողջամիտ ժամկետում իր իրավունքները վերականգնելու հնարավորությունը: Խնդրել է ստուգել կատարողական գործողությունները հետաձգելու մասին 2016թ. սեպտեմբերի 26-ի և հոկտեմբերի 27-ի «որոշումների օրինականությունը և անհրաժեշտության դեպքում ձեռնարկել համապատասխան միջոցներ» /ն.թ. 9-10/:

2. ԼՂՀ գլխավոր դատախազության ՀՆՕՆՀ բաժնի դատախազ Ա. Սաֆարյանը 2016թ. դեկտեմբերի 19-ին գրությամբ պատասխանել է Ս.Կարախանյանին, պարզաբանելով, որ «ԴԱՀԿ ծառայության բաժիններում և բաժանմունքներում միատեսակ իրավակիրառ պրակտիկա ապահովելու համար մեթոդական ուղեցույցի իրավաչափությունը վիճարկելու համար ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ կետի և 136-րդ հոդվածների հիմքերով» կարող է դիմել դատարան /ն.թ. 11-12/:

3. ԼՂՀ արդարադատության նախարարության ԴԱՀԿ ապահովող ծառայության հարկադիր կատարող Ա.Կ.Սարգսյանի 2016թ. սեպտեմբերի 26-ի «կատարողական վարույթը հետաձգելու մասին» երեք որոշումներով հետաձգվել են 3-2771/16, 3-2772/16, 3-2773/16, 3-2774/16, 3-2775/16 վարույթներով կատարողական գործողությունները մեկ ամիս ժամկետով /ն.թ. 6-8/:

4. ԼՂՀ արդարադատության նախարարության ԴԱՀԿ ապահովող ծառայության հարկադիր կատարող Ա.Կ.Սարգսյանի 2016թ. հոկտեմբերի 27-ի որոշումներով ևս մեկ ամիս ժամկետով հետաձգվել են 3-2771/16, 3-2772/16, 3-2773/16, 3-2774/16, 3-2775/16 վարույթներով կատարողական գործողությունները /ն.թ. 3-5/:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

Բողոքաբերը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է դատավարական իրավունքի նորմերի էական խախտումներով:

Ըստ բողոքաբերի՝ խախտվել են քրեական դատավարության օրինականության և ապացույցների ազատ գնահատման սկզբունքները, ինչն ազդել է գործի ելքի վրա և հանդիսանում է որոշումը բեկանելու հիմք:

Ըստ բողոքաբերի՝ քանի որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ԼՂՀ օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ մասերի համաձայն, հարկադիր կատարողի որոշման օրինականությունը ու հիմնավորվածությունը որոշվում են վերադատության կարգով կամ դատարանի կողմից, իսկ պաշտոնէական դիրքի չարաշահման կամ պաշտոնէական լիազորություններն անցնելու հանցակազմերի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է տվյալ դեպքում անօրինական որոշում կայացնելը, ուստի Ս.Յու.Կարախանյանի դիմումը չի պարունակում տեղեկություններ հանցագործության հատկանիշները մատնանշող տվյալների մասին: Այսինքն, քանի դեռ վարչական դատարանի կողմից կամ վերադատության կարգով վերացված չէ տվյալ որոշումը /կատարողական վարույթները հետաձգելու մասին հարկադիր կատարող Ա.Սարգսյանի որոշումները/ որպես անօրինական և անհիմն, ուստի չի կարող խոսք լինել վերը նշված երկու հանցակազմերի հատկանիշները մատնանշող տվյալների մասին:

Բողոքաբերը նշել է, որ հանցագործությունը մատնանշող բավարար տվյալները ոչ թե հանցագործության մասին հաղորդման գրանցման և ընդունման հիմք են, այլ քրեական գործի հարուցման հիմք: Այսինքն, դատախազությունը դիմող Ս.Կարախանյանի դիմումը որպես հանցագործություն չգրանցելու պատճառ է համարել հանցագործության մասին հաղորդման վերացական և ընդհանուր բնույթի լինելը:

Ըստ բողոքաբերի՝ դատախազությանը հասցեագրված Ս.Կարախանյանի դիմումում կոնկրետ հանցագործության հատկանիշներ պարունակող, նախապատրաստվող կամ արդեն կատարված հանցագործության մասին որևէ տեղեկություն չկա, իսկ դա անհրաժեշտ պայման է, որպեսզի ֆիզիկական անձի կողմից ներկայացված դիմումը համարվի հանցագործության մասին հաղորդում: Դիմումում միայն նշված են փոխառության պայմանագրով չկատարված պարտավորության առթիվ կայացված վճռով հարուցված կատարողական վարույթի մասին, պարտապանի բնակարանի հրապարակային սակարկություններով վաճառելու և դրա վաճառքից ստացված գումարով պարտավորությունները մարելու և հարկադիր կատարողի կողմից անօրինական որոշում կայացնելու մասին: Այսինքն, դիմումն իր բովանդակությամբ և ձևով չի հանդիսանում հանցագործության մասին ֆիզիկական անձի հաղորդում, քանի որ այն կրում է վերացական և ընդհանուր բնույթ:

Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 186-188-րդ, 191-րդ հոդվածների դրույթները մեկնաբանել է «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 87-րդ հոդվածի պահանջների խախտմամբ:

Գտնում է, որ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Բողոքաբերը խնդրել է Վերաքննիչ դատարանի 2017թ. մայիսի 23-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ ԸԻԴ 0001/11/17 քրեական նյութով Առաջին աստիճանի դատարանի 2017թ. ապրիլի 13-ի որոշմանը:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Գերագույն դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը պայմանավորված է օրենքի միատեսակ կիրառության ապահովման անհրաժեշտությամբ, քանի որ բողոքարկվող դատական ակտի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Սույն գործով վճռաբեկ բողոքում բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված է, արդյոք, Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ Սուրեն Կարախանյանի 12.12.2016թ. դիմումը՝ ներկայացված ԼՂՀ գլխավոր դատախազությանը, հանդիսանում է հանցագործության մասին հաղորդում և դրա վերաբերյալ պետք է կայացվեր քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշում:

Դատախազության մասին ԼՂՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ դատախազությունը օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝

- 1) հարուցում և իրականացնում է քրեական հետապնդում.
- 2) հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ.
- 3) դատարանում պաշտպանում է մեղադրանքը.
- 4) պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան.
- 5) բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները.
- 6) հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:

Դատախազության մասին ԼՂՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական հետապնդման հարուցման և իրականացման կարգն ու հիմքերը սահմանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով:

Դատախազության մասին ԼՂՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքով և դատավարական օրենսգրքերով նախատեսված դեպքերում դատախազն ընդունում է որոշում, արձակում է հրաման կամ կարգադրություն, ներկայացնում միջնորդագիր, տալիս ցուցում:

Նշված իրավական կարգավորումներից հետևում է, որ օրենքով նախատեսված այլ գործառույթների հետ մեկտեղ դատախազությունը լիազորված է ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ համապատասխան հիմքերի առկայության դեպքում, հարուցել և իրականացնել քրեական հետապնդում: Ընդ որում, դատախազն օրենքով նախատեսված իր լիազորություններն իրականացնելիս ընդունում է որոշում, արձակում է հրաման կամ կարգադրություն, ներկայացնում միջնորդագիր, տալիս ցուցում:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործ հարուցելու առիթներն են՝ հանցագործությունների մասին ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները՝ ուղղված հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցագործությունների մասին ֆիզիկական անձանց հաղորդումները կարող են լինել գրավոր կամ բանավոր:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 191-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելը ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից տասը օրվա ընթացքում: Նշված ժամկետում կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ, այլ նյութեր, ինչպես նաև կարող է կատարվել դեպքի վայրի զննություն, հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում կարող են բերման և անձնական խուզարկության ենթարկվել անձինք, հետազոտման համար վերցվել նմուշներ, նշանակվել փորձաքննություն:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 192-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործության մասին տեղեկություն ստանալու յուրաքանչյուր դեպքում ընդունվում է հետևյալ որոշումներից մեկը՝

- 1) քրեական գործ հարուցելու մասին.
- 2) քրեական գործ հարուցելը մերժելու մասին.
- 3) հաղորդումն ըստ ենթակայության հանձնելու մասին:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործ հարուցելու առիթի և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելու մասին:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու կամ հիմքերի բացակայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

Վերլուծության ենթարկելով վերը նշված քրեադատավարական նորմերը, Գերագույն դատարանն արձանագրում է, որ հանցագործության մասին հաղորդումը՝ իբրև քրեական գործ հարուցելու առիթ, հանդիսանում է ֆիզիկական կամ իրավաբանական անձանց այն գրավոր կամ բանավոր դիմումը՝ ուղղված հետաքննության մարմնին, քննիչին կամ դատախազին, որում առկա են կոնկրետ հանցագործության տարրեր պարունակող նախապատրաստվող կամ կատարված հանցագործության մասին տեղեկատվություններ:

Քրեական գործի հարուցման առիթները պետք է բովանդակեն տեղեկություն հանցագործության հատկանիշները մատնանշող տվյալների առկայության մասին: Այդպիսի տվյալների առկայության դեպքում է միայն քրեական հետապնդում իրականացնող մարմինը ձեռնամուխ լինում քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ստուգում իրականացնելուն, որի արդյունքներով կայացնում է համապատասխան որոշում՝ քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը

մերժելու մասին: Այսինքն՝ քրեական գործ հարուցելու առիթ կարող է հանդիսանալ ոչ թե ցանկացած, այլ միայն հանցագործության մասին արված հաղորդումը:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ հանցագործության մասին հաղորդումն իրավաբանական փաստ է, որն առաջացնում է այն ստուգելուն և լուծելուն ուղղված դատավարական իրավահարաբերություններ: Հաղորդումը՝ որպես քրեական գործ հարուցելու առիթ, պետք է համապատասխանի որոշակիության բովանդակային չափանիշին, մասնավորապես՝ բովանդակի տեղեկություն կոնկրետ հանցագործության հատկանիշները մատնանշող տվյալների առկայության մասին: Նշվածը, սակայն, չի ենթադրում, որ քննարկման և լուծման ենթակա է միայն այն հաղորդումը, որը պարունակում է քրեական գործ հարուցելու բավարար հիմքեր: Հաղորդման մեջ պարունակվող տեղեկությունները կարող են բավարար լինել այն քննարկելուն, ստուգելուն և լուծելուն ուղղված վերը նշված քրեադատավարական կարգավորումները գործողության մեջ դնելու համար, եթե ողջամիտ հավանակություն կա, որ դրանց ստուգման արդյունքում կարող են հայտնաբերվել, այլ ոչ թե հաստատապես հայտնաբերվելու են քրեական գործ հարուցելու բավարար հիմքեր: Քննարկված չափանիշին համապատասխանող յուրաքանչյուր հաղորդում առաջացնում է վարույթ իրականացնող մարմնի պարտականությունը՝ դրա կապակցությամբ կայացնել ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 192-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը:

Սույն քրեական նյութի ուսումնասիրությունից երևում է, որ Սուրեն Կարախանյանը 2016թ. դեկտեմբերի 13-ին դիմում է ներկայացրել ԼՂՀ գլխավոր դատախազություն՝ հայտնելով, որ ԼՂՀ ԴԱՀԿ ծառայությունում իրականացվող 3-2771/16, 3-2772/16, 3-2773/16, 3-2774/16, 3-2775/16 կատարողական վարույթներով հանդիսանում է պահանջատեր և նշված վարույթներով հարկադիր կատարողը, հակառակ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ԼՂՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, կատարողական գործողությունները 2016թ. սեպտեմբերի 26-ի որոշմամբ հետաձգել է մեկ ամսով՝ այն դեպքում, երբ նշված օրենքը թույլ է տալիս հարկադիր կատարողին հետաձգել կատարողական գործողությունները մինչև երկու շաբաթ ժամկետով՝ այն էլ ոչ ավելի, քան մեկ անգամ: Դիմումից հետևում է նաև, որ հակառակ օրենքի նշված կարգավորմանը, հարկադիր կատարողի 2016թ. հոկտեմբերի 27-ի որոշմամբ կատարողական գործողությունները հետաձգվել են երկրորդ անգամ ևս մեկ ամսով: Հայտնել է, որ իր կարծիքով ԼՂՀ ԴԱՀԿ ծառայության հարկադիր կատարող Ա.Մարգարյանը նշված որոշումները կայացնելիս չարաշահել է պաշտոնական լիազորությունները և թույլ է տվել պաշտոնական լիազորությունների անցում, ինչի հետևանքով խախտվել է ողջամիտ ժամկետում իր իրավունքները վերականգնելու հնարավորությունը: Խնդրել է ստուգել կատարողական գործողությունները հետաձգելու մասին 2016թ. սեպտեմբերի 26-ի և հոկտեմբերի 27-ի որոշումների օրինականությունը և անհրաժեշտության դեպքում ձեռնարկել համապատասխան միջոցներ:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ԼՂՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարողական գործողությունները հետաձգվում են կատարողական գործողությունների իրականացումն արգելակող

հանգամանքների առկայության դեպքում մինչև այդ հանգամանքների վերանալը՝

1) հարկադիր կատարողի նախաձեռնությամբ կամ կողմերի դիմումի հիման վրա՝ ոչ ավելի, քան մեկ անգամ, մինչև երկու շաբաթ ժամկետով.

2) դատարանի որոշման հիման վրա՝ նույն օրենքի 22-րդ հոդվածով սահմանված կարգով, ինչպես նաև նույն օրենքի 50-րդ հոդվածին համապատասխան՝ գրավառուի կողմից պարտավորությունների վաղաժամկետ կատարում պահանջելիս:

Նշված հոդվածի կարգավորումներից ակնհայտ է, որ կատարողական գործողությունները կարող են հետաձգվել երկու դեպքերում, այն է՝ 1/հարկադիր կատարողի նախաձեռնությամբ կամ կողմերի դիմումի հիման վրա՝ ոչ ավելի, քան մեկ անգամ, մինչև երկու շաբաթ ժամկետով, 2/դատարանի որոշման հիման վրա:

ԼՂՀ գլխավոր դատախազությանը ներկայացված դիմումին կցվել են հարկադիր կատարողի 2016թ. սեպտեմբերի 26-ի և հոկտեմբերի 27-ի որոշումները, որոնցում կատարողական գործողությունները հետաձգելու մասին դատարանի որոշման վերաբերյալ որևէ նշում չկա:

Գերագույն դատարանը, հաշվի առնելով վերը նշված հանգամանքները գտնում է, որ Սուրեն Կարախանյանի 2016թ. դեկտեմբերի 12-ի դիմումը բովանդակում է բավարար տեղեկություն հանցագործության հատկանիշները մատնանշող տվյալների առկայության մասին և բովանդակային առումով համապատասխանում է որոշակիության չափանիշին: Բացի այդ, հնարավոր է ողջամիտ ենթադրություն անել, որ այդ տեղեկությունների ստուգման արդյունքներով կարող են հայտնաբերվել քրեական գործ հարուցելու բավարար հիմքեր: Հետևաբար՝ նշված դիմումը հիմք է հանդիսանում քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ստուգում իրականացնելու համար, որի արդյունքներով պետք է կայացվի համապատասխան դատավարական որոշում:

Այսպիսով, Գերագույն դատարանը հիմնավոր է համարում Վերաքննիչ դատարանի 2017 թվականի մայիսի 23-ի որոշումը՝ Առաջին ատյանի դատարանի 2017թ. ապրիլի 13-ի որոշումը բեկանելու մասին: Նշված որոշումը կայացնելիս Վերաքննիչ դատարանը իրավացիորեն արձանագրել է, որ Արցախի Հանրապետության գլխավոր դատախազության կողմից Ս.Կարախանյանի դիմումին գրությամբ պատասխանելն իրավաչափ չէ ու նշված դիմումը որպես առերևույթ հանցագործության մասին հաղորդում չդիտարկելով և դրա վերաբերյալ քրեադատավարական օրենքով նախատեսված որոշում չկայացնելով՝ դատախազը թույլ է տվել անգործություն, որպիսի փաստն էլ պատշաճ իրավական գնահատականի չի արժանացել Առաջին ատյանի դատարանի կողմից:

Մինևույն ժամանակ, Գերագույն դատարանը հարկ է համարում նշել, որ իրավացի է վճռաբեկ բողոքի այն պնդումը, որ հարկադիր կատարողի որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը որոշվում են վերադատության կարգով կամ դատարանի կողմից և նման ստուգումը դատախազը լիազորված չէ իրականացնել: Սակայն, Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ վարչական ակտի վերացված կամ բողոքարկված չլինելը չի կարող արգելք հադիսանալ, որպեսզի համապատասխան ստուգում իրականացվի դիմումում նշված մյուս տեղեկությունների, մասնավորապես՝

հանցագործության հատկանիշները մատնանշող տվյալների վերաբերյալ: Այլ կերպ, դիմումի այն մասով, որով պահանջվում է ստուգել վարչական ակտի օրինականությունը կամ հիմնավորվածությունը կարող էր տրվել գրությամբ պատասխան՝ համապատասխան պարզաբանումներով, սակայն հանցագործության հատկանիշները մատնանշող տվյալների վերաբերյալ պարտադիր կերպով պետք է կատարվեր քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ստուգում և կայացվեր դատավարական որոշում:

Այսպիսով, Գերագույն դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի փաստարկները՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումների վերաբերյալ, անհիմն են, հետևաբար վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից, Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի եզրահանգումները հիմնավորված և օրինական են, ուստի պետք է կիրառել ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 436-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված լիազորությունը և վճռաբեկ բողոքը մերժել՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 421-424-րդ, 436-րդ, 438-440-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ԸԻԴ 0001/11/17 քրեական նյութով ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Ավագյանի վճռաբեկ բողոքը մերժել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2017 թվականի մայիսի 23-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

ստորագրություն

Գ.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ

ստորագրություն

Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ստորագրություն

Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ